

# ԴՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1902

3.7902.403R  
R.F. BUREAU  
LIBRARY  
Address

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

REDACTION DU JOURNAL

„Droschak”

GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

### Զ Լ Յ Ա Փ Շ Տ Ա Կ Ի Ե Ն Ք

Խրաքանչևուր հայ—լինի յեղափոխական լծէ խաղաղական—ուրախութեամբ կ'ողջունէ Բրիտէյի կօնգրէսը, նրա որոշումները:

Prü Armenia-ի հիմնադրութիւնից իվեր զա առաջին նշանաւոր փորձն է՝ կենարօնացնելու ցիր-ցան ուժերը և ստեղծելու ինպատակ հայերի միջազգային ամբողջական մի շարժում: Արքան կ'աջողի այդ ցոյց կըտայ սպագան: Շարժման գլուխ կուսած անձնաւորութիւնները իրենց մտաւոր ու բարոյական հեղինակութեամբ և միանգամայն հայաստանական պատգամներով այժմից երաշխաւորում են, որ գործը աջող կ'երթայ:

Հարկ կայ արդեօք պնդելու, որ այդ գործը դեռ „բոլոր” գործը չէ... Շատ հեռու չ'երթանք մեր յաւիշտակութեան մէջ, չ'օրօրենք պատրանքներով և մեր միամտութեան կրկին չ'ընկնենք: Մի կուսք ունենինք 20 տարի առաջ—պ ա շ ա տ ն ա կ ա ն Ե ւ Ր օ պ ա ն, որ հոգեւոր էր և իրօք եղել էր սպառաքարը տաճկահայաստան սարուկ ազգերի: Մենք նրան գուրգուրացնենք, երկրպագեցնենք, բայց նա մեզ դաւաճանաց և կոխկոտելով ամեն սրբութիւն, հասկացրեց մեզ, որ ղէնքն է միակ գերագոյն երաւարարը և որ ազգերը իրենք պիտի կրեն իրենց սեփական ճակատագիրը:

Ե՛րբ մի երկրորդ կուսք ստեղծելու վրայ ենք... Կուի և արեան դաշտից դուրս գտնուող մեր հասարակութիւնը այժմ, կարծէք, արամադիր է հաւատալ, որ միջազգային հասարակութեան շարժումը մի պատասէ է, մի „համագարման” հայի վէրքերին:

Մի նոր պաշտամունք. Մի երկրորդ կուսք, որ անհունապէս աւելի մարդ է, քան առաջինը, բայց որը դարձեալ վասնգաւոր է: Մեր յաւիտական լայկանները, մեր անկեղծ ու կեղծաւոր խաղաղականները ստրկամտութեամբ դուրս կը ծոնեն այդ կուսքի առաջ և այսուհետև գուցէ աւելի յանդուգն ու ամբարատան՝ կը գուշեն յեղափոխականներին. „Չէնքը ցած դրէք, մենք հանգիստ մնանք, հայաստանները կը հոգան, Բրիտէյի Զանձաժողովը ամեն ինչ կը կարգադրէ”...

Չքուշանանք, և լծէ չենք ուղում վերստին մասնուել ճակատագրի գաժան խողերին:

Հայասեր շարժումը մեծ, սիրովիչ երկոյթ է մեր իրա-

կանութեան մէջ—այդ մենք քանիցս շեշտել ենք արդէն: Եւրօպական պրօպագանդը անպայման անհրաժեշտ է՝ լծէ նոր աղետների առաջն առնելու համար և լծէ մեր գաղը կենդանի պահելու դիւանագիտական սեղանի վրայ: Բայց սոսկ այդ պրօպագանդը անզօր է ստեղծելու դիւանաներում մեր խնդրի արմատական լուծման տեսակետից նպատաւոր արամադրութիւն:

Սուրբանի վրայ ազդելու համար — ինչպէս իրաւացի նկատեց կօնգրէսի անգամներէց միւր — պէտք է ուժ գործ դնել կօնգրէսի որոշումները, տարաբախտաբար, չեն համապատասխանում այդ հրամայական պահանջին: Հայասեր շարժումը իր արդի կերպարանքով — յուսանք, որ հեղաշեւտ նա կը կերպարանափոխուի — անկարող է հրաւիրել ազգու միջամտութիւն:

Եւրօպացի մեր բարեկամները ղեկել աւին Մուշ հիւպատոսական գործակալներ, և նրանց յորդորներով նորերը ևս կը ղեկին հայրենիքի զանազան կողմերը: Մեծ վատասի է դա ներկայ պայմաններում և վերին սատիճանի կազմուրիչ հանգամանք:

Սակայն մեր պարտքն է յիշեցնել նաև, որ այդ գործակալները չ'հարողացան օգնել, երբ 1895-ին արեան հեղեղները ոսոգում էին Մեծ Հայաստանը. մեր պարտքն է յիշեցնել, որ Եւրօպայի լիազօր ներկայացուցիչներն անգամ մտղև չ'ափ չ'օգնեցին, երբ իրենց աչքերի առջև հազարաւոր հայերի դիակներ փոււում էին Կ. Պօլսի ստրայատակների վրայ:

Պատրաստ լինենք միշտ ահաւոր պատահականութիւնների համար մի քիչ նւազ լաւատես, մի քիչ աւելի ուշախոս ու գործնական լինենք: Խրախուսենք եւրօպական պրօպագանդը, բայց աւելի ևս խրախուսենք բուն գործի պրօպագանդը հայրենիքում, առանց որի չ'իք հայկական դատ:

### Բ Ի Ի Ի Ս Ե Լ Ի Կ Օ Ն Գ Ի Է Ս Ը

#### Ք Ի Է Ա Ր Կ Ի Ա Ճ Ո Ր Ո Ճ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

1

#### Կ Օ Ն Գ Ի Է Ս Ը

1) Համուրած լինելով, որ հայերի պահանջած բեֆօրմ ներքն ու երաշխիքները կարող են իրագործուել առանց լուրնանալու թիւրքիայի հողային ամբողջութեան վրայ.

Վ Ե Ր Զ Ի Ն Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը

2) որ թիւք ազգաբնակիւթեան շահն իսկ պահանջում է՝ յարել բարենորոգման այդ գործին՝

Յիշեցնում է բերլինի դաշնագրի 61-րդ յօդ.ածի բնագիրը, որ է՝

«Բարձր Գուռը պարտաւորում է անյապաղ իրագործել այն բարեփոխմանն ու սեփօրմանը, որ պահանջում են հայաբնակ գաւառների սեղանական պէտքերը, և երաշխաւորել հայերի ապահովութիւնը քրդերի ու չքքեզների դէմ: Նա պարբերաբար կը հաղորդէ զրա համար ձեռք առնած միջոցները պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց գործադրութեան վրայ»

Հաստատում է, որ այդ յօդ.ածով Լեւոստան իրաւունք է ստացել և ստանձնել է պարտաւորութիւն՝ ապահովելու հայ ազգաբնակիւթիւնների կեանքը, շրջագայելու ազատութիւնը, իրենց դոյքի խաղաղ տիրապետումը և խղճի ազատութիւնը:

Յայտարարում է, որ ժամանակ է, յանուն Լեւոստայի պատի և մարդկութեան բարկկեցութեան, որ այդ յօդ.ածը ստանայ լիակատար և օրինաւոր գործադրութիւն:

Հրաւիրում է կառավարութիւններին ու ժողովուրդներին՝ գործել 1895-ի Մէմբրանդումի ոգով՝ համերաշխ միջամտութեամբ:

Լեւոստանարարում է իր միջադպիսին մնայուն Յանձնաժողովին՝ կազմակերպել գործուն պրօպագանդ պարլամենտներում, մամուլի մէջ և հանրային կարծիքի շուրջը:

II

ԿՕՆԳՐԷՍԸ՝

Գոհութեամբ արձանագրելով Գրանտիայի և Ռուսաստանի ձեռք առած վերջին միջոցը՝ Հայաստանում իրենց հիւպատոսական գործակալների թիւը աւելացնելու համար, հրաւիրում է իր այն անդամներին, որոնք մասնակցութիւն ունին օրէնսդիր ժողովների մէջ՝ պահանջել իրենց կառավարութիւններից ձեռք առնել նոյնանման միջոցներ:

III

ԿՕՆԳՐԷՍԸ՝

Յանձնելով, քեւարեւած որոշումների բնագիրը Լեւոստայական մամուլին, յոյս է տածում, որ Լեւոստայի թերթերը արդարութեան ու մարդկայնութեան նկատումով՝ ամենուրեք և ամենասիրայօժար հրատարակութեան կրտսն Հայաստանից եկած լուրերը, որոնք նրան կը հաղորդին մնայուն Յանձնաժողովը:

Մի շքաբերական կ'ուզուի Լեւոստայական լրագիրներին սեփականատէր-հրատարակիչներին, և մնայուն Յանձնաժողովը առաջիկայ կօնգրէսին հաշու կը ներկայացնէ, թէ ինչպիսի ընդունելութիւն են արել այդ լրագիրները հաղորդած լուրերին:

(Կօնգրէսի մանրամասնը տեսնել «Թերթ»-ում):

Ստանուի մեր ընկերներից վերջին օրերս ստացանք մի շարք անհանգստացնող նամակներ: Ահա թէ ինչպէս է ներկայացնում զրութիւնը մի հեւասագիր, որ մենք ստացանք օգոստոսի 7-ին, Ռաւրիզի վրայով, վստահելի ազդեցիկ:

«Մոռչի կառավարութիւնը ուղարկեց դէպի Սասունի շրջակայքը հինգ վաշտ զօրք: Հրահանգ է տրւած քրուրդ աշիրաթներին, ամառնալ ամիսներին Սասուն անցնելիս՝ գալ առանց իրենց ընտանիքներին՝ Հաղորդակցութիւնը Մոռչի և Սասունի միջև ընդհատուած է: Յուղմունքը մեծ է»:

ԳՐԻՉՐ ԲԱՂԱՔԱԳՎՏՆԵՐԻ ՁԵՌՔՈՒՄ

Գեղանի բարձունքից Լարի խաղաղ կոհակները զիտող հոյակապ շինութեան մէջ, — շէրքեան Գաշնակցութեան պալատն է դա — կրճերին ժապաւինապատ գրէզը, փայփայտած բերնի հասարակութեան սրտագին հիւրասրութեամբ, գրէզի զինուորները խորհրդաւոր նիստեր էին կազմում:

Մամուլի միջադպիսին կօնգրէսն է դա:

Որքան գեղեցիկ է այդ խօսքը: Ընկախ, ձևքին զինքերից ամենաամբիւր, սիրտը յուզած հասարակական ցաւերով, կանգնած մի ամբիւրի վրայ, որ խօսում է մարդոց ականջին աշխարհի բոլոր ծայրերում, նա իրեն կարծում է սպառնալի անցնալի նախապաշարութեան դէմ, ազդանշան օրւայ շարքների, անկաշառ պաշտպան արդարութեան, տարածող, ժողովրդացնող մեծ մտքերի:

Լեւոստայի երջանիկ օրեր. — համախմբուած այն երկրի կենտրոնում, որ իր փոքրութեան մէջ ամենամեծն է — փոքրիկ մեծ Շվեյցարիա ասում են պարծանքով Տէլի հայրենակիցները — բազմած մի շինութեան մէջ, որ եթէ ամենագեղեցիկը չէ ամբողջ Լեւոստայում, բայց ամենաերջանիկն է իրենց տրամադրութեան տակ օրգաններ, որոնք ցէնդօր ընն ճանաչում: Հեռագիր, որ կնիակայ չէ ստիկանական ոչ մի արգելքի, եկած Լապօնիայից, Լմերիկայից, ներկայացուցիչ Լեւոստայի բոլոր փոքր իշտակ կարեւոր քաղաքների, թուրք աւելի քան երեք հարիւր, նրանք հրաշքներ կարող էին գործել, հրաշքներ իրական, վիթխարի, բուժիչ:

Վակայն մինչև ոսկորը ծծուած քաղաքագիտական նրբութիւններով, որ պարզօրէն ոչ այլ ինչ է, կի՛ն ոչ երկչօսութիւն և խորամանկութիւն, զրանք, այդ անծիրանի և անպաշտօն գեղջամտները, այնքան կոտորուն դասակարգային, պրօֆէսիօնալ փոքրիկ շահերին յարակից խնդիրներում, այնքան նրբագոյց, երբ կարգադրիչ կօմիտէն աւետում էր: Ուէ զբօսանք կամ ինչոյք գեղանկար լեռան գագաթին կամ զմայլիչ լճի ափերին, այլակերպութեամբ կծկուած, զառնում էին անմասնելի սարուկ իրենց նեղ կանոնադրութեան, երբ պէտք էր ուէ բողոք մի այլանդակ բռնապետութեան դէմ, կամ ուէ ճշմարտութիւն՝ զժրատապ պղծութիւն ստօրեայ ցաւերի մասին:

«Մենք քաղաքական հարցերով չենք զբաղուում» — ահա մամուլի կոնգրեսի նշանաբանը, ահա նրա անդամներին ամեն մեկի պատրաստակը, արդարացման ամենահեշտ, բայց և ամենամիմաստ ձևը: «Եթե կամենայք, ես հրացան առած Հայաստան կերթամ, կուեղու նրա աղատութեան համար, բայց այստեղ՝ կոնգրեսի մեջ, եթե հարցը դրել, փոխանակ համակրութեան՝ դիմադրութիւն կը ցոյց տամ» այսպէս ասաց Փրանսիացի մի ժողովուրդային իր «քաղաքագիտական» ոգևորութեան բողոքը:

Ինչո՞ւ: Նրա համար, փաստաբանուում են անպաշտօն դիպլոմատները, որ եթե այսօր պաշտօնապէս յարուցանենք հայոց հարցը, վաղը կը վայ լեհականը, մի այլ անգամ՝ Ֆինլանդական խնդիրը, մի ուրիշ օր բօքրական կամ նոյնիսկ Ալբան-Ղօտարինգեան հարցը և այդ բոլորից ոչինչ չի ծագի, բայց թէ պայքար, կոխ, թշնամութիւններ և ի վերջոյ ամբողջ կոնգրեսի ոչնչացումը:

Կենսահանրութեան վահան: Արևի, թշնամութեան և քայքայման առաջին առնելու համար կոնգրեսի անդամները ութ տարուց ի վեր— VIII-րդ կոնգրեսն է սա— չեն որոնել և չեն գտնուում այն ճանապարհը, որ տանում է մարդոց դէպի համբարաշուութիւն, ոչ թէ զբացմունքները և մաքրել թագցնելով, այլ խոնարհելով մի արդարութեան առաջ, որ յաւիտենական է, որ չի ճանաչում ազգային և պետական սահմաններ, որ ընդունում է հայի համար անկախ կեանքի նոյն իրաւունքները, ինչ թիւրքի համար, որ շնորհում է լեհացուն նոյնը, ինչ գերմանացուն, որի համար Ֆինլանդիան նոյնքան լիանի է, որքան Ռուսաստանը, կամ որ արածնում է բօքր ժողովրդին նոյնը, ինչ անգլիացիներին:

1900 թվ. Պարիզի սօցիալիստական համաժողովում լեզվից անդամները, վերաւորելու փոխարէն, իրենց ձայնը միացրին Փրանսիացի և գերմանացի ընկերների բողոքին ընդդէմ՝ բրիտանական կառավարութեան արարքներին հրամաւորում: Եւ եթե մի օր սօցիալիստական մի այլ ժողովում գերմանացիները նոյն անկեղծութեամբ չեն միանայ իրենց օտարերկրացի ընկերների հետ՝ բրոնտայրու այն բռնութեան դէմ, որ կատարում է Վերմանիան Ալբասում կամ Ղեհաստանում, նրանք կը համարեն և պէտք է համարեն նենգամիտ շփոխաններ, որոնք դաւանում են արդարութեան «երկու չափերի ուղի»։ Եթե միջազգային սօցիալիստների ունե համաժողովում, համբարաշուութեան միակ պատուանդանը պէտք է լինի քաղաքական հարցերից խոստանալիս այն փերուան սխտեմը, որ թշնամութիւն չյարուցանելու համար խոյս է առիւս բոլոր այրող խնդիրներից, քննադատը իրաւունք կ'ունենայ բացարձակ ասելու, որ դա զիպլոմատ-սօցիալիստների, խարդախ և երկզտ մտածողների մի ժողով է, անզօր ըմբռնելու բարձրագոյն արդարութեան գաղափարը:

Այդպէս էլ մամուլի կոնգրեսը: Նոյն այն մարդիկ, որոնք ամբողջ տարիներ քննում և պարզաբանում են մի օր լեհական խնդիրը, միւս օր հայոց հարցը, մի այլ անգամ՝ Ֆինլանդիայի կամ Թիւրքիայի խնդիրը, նոյն այդ մարդիկ քաջութիւն չունենցան միևնոյն հարցերի մասին կարծիք յայտնելու իրենց հրատարական, հանդիսաւոր ժողովում, իբրև ամբողջութեան այն հայեացքների, որ արտայայտում են անթիւ օրգաններում և զանազան երկրների մէջ: Աւելին: Մամուլի պատի խնդիրը քննելիս մտացան, թէ ապագական խօսքի վարկաբեկողը

այսօր հեռագրական տարիքը չէ և ոչ էլ պօլիմիկայի ոճը, այլ այն, օրինակ, որ մի շարք լրագրիներ, նոյնիսկ շատ ազդեցիկ, երէկ հրատարակ գալով հայոց հարցի ոգևորած պաշտպանի դերում, այժմ դարձել են, ոսկու շնորհիւ, պաշտպաններ «Մեծ Մարդասպանի»: Այսօր ուրիշները, կաշառած, կամ գրաված ունե մինիստրութիւնից, ունե կապիտալիստից, գրեթէ դարձրել է վաճառքի աղբանք, ասուածացնելու հրատարակային գողութիւնները և ճնշումները, իհարկէ միշտ ի վնաս ճնշածներին...

Ինչո՞ւ լուցին այս մասին: Գաշնակցական պայտտի մէջ դրչի զինուորները, աւանդ, այս անգամ էլ դաւաճանեցին: Արդիւրբ բոնեց համբարաշուութեան տեղը: Արտայայտելով համակրանք Մարտինիկի զոհերին, Հոմբուրգի խեղդածներին և կամ Վենետիկեան արկածին, գրչի մարդիկ ուղեցին հաւատացնել, որ նրանք մշակում են ազգերի համբարաշուութեան անդատանը, որ նրանք ծառայում են միջազգային արդարութեան գործին, մոռացած, որ այդպիսի ցաւակցութեան և համբարաշուութեան փաստեր իրենցից առաջ և աւելի ուժգին կերպով տեղեցին թագապիւրները, և նրանց սպասուոր մինիստրները, նրանք, որոնց ամբողջ ուժը հիմնած է ազգերի թէև խուլ բայց խոր թշնամանքի վրայ:

Պայմանական լուրեր և դասակարգային շահերի նեղ պաշտպանութեան մէջ չէ մամուլի ուժը, այնքան գովարանած՝ այնքան ժամանակ և բոլոր շրջաններում: Այդ ուժը՝ անկախ, ներքին համբարաշուութեան մէջ է, որ թելադրում է նոյն գաղափարը, նոյն նպատակը, ձրքատուներին նոյն վախճանը: Չկար գաղափարի այդ համբարաշուութիւնը բերնի կոնգրեսում, այլ դրա փոխարէն մի ինչ որ աներեղթ, բայց խիստ սանձ, դրած գրչի մարդոց բերանին, յանուն փոխադարձ քաղաքավարութեան, յանուն խաղաղութեան: Եւ այն մարդիկ, որոնց ձեռքում են այդ սանձի ծայրերը ստիպում են մոռնելով, թէ մի օր, մէկ կամ մի քանի «խենթերի» շնորհիւ՝ կը ժայթքի փակած աղբիւրը, որ «քաղաքական խընդիրների» անունն է կրում, ցոյց տալու թէ որքան արհեստական, որքան շինծու, որքան փերուան է այն համբարաշուութիւնը, որ հիմնած է փոխադարձ և պայմանական լուրերի վրայ, մի ցաւագար լուրեր, որ պահանջում է թագցնել ամենախոր վերքերը, ամենալիանկագին իղձերը...

Ահա մի լեհացի, բազմած կոնգրեսի ալոսներից մեկի վրայ. նա պիտի ճառեր լսի, ճառեր ապարդիւն, աննպատակ, սակայն ինքը մի բառ անգամ չպիտի արտասանի այն հայրենիքի մասին, որ այրուում է և իր հետ միասին այրում իր գգայուն զաւակներին:

Ահա աղատ խօսքի մի սիրահար, բազմած մի այլ ալոսի վրայ: Հնչում են նրա ականջին գեղեցիկ հրաւերներ՝ լինելիք ճաշերի և զբօսանքների մասին, բայց և ոչ մի խօսք՝ սարկացած գրչի մասին, որ այնքան տարի հեծում է գրաքննական և վարչական կապանքների տակ ի վնաս ամբողջ ժողովրդի:

Ահա մի հայ, որ ճառերի ամբողջ տարափ է կրում իր ականջների վրայ, յանուն գրչի անկախութեան, յանուն ճշմարտութեան, բայց որը հասարակ է մնում մի բառ անգամ լսելու, երբ այդ ճշմարտութիւնը վերաբերում է այն երկրին, որ հեղեղած է արիւնով և ծածկուած անմեղների յօշոտած դիակներով:

Եւ մի օր, երբ աշխարհի բոլոր ծայրերից եկած մարդիկ,

մամուլի ղեկավարներ, կամք կ'ունենան կամ թոյլ կը տու-  
խօսել իրենց առօրեայ, ճնշող իրական ցաւերի մասին,  
երբ ուուսը կը բանայ իր երկրի վէրքերը, հայր իր  
հայրենիքի դարդերը, լեհացին իր քաղաքական տենչը,  
ազատասէր անգլիացին, սօցիալիստ գերմանացին, անկախ  
Ֆրանսիացին իրենց ներքին կամ արտաքին ցաւերը, և  
երբ այդ բախտաւոր օրը զանազան ազգութեան և  
տարբեր երկրներին պատկանող մարդիկ, տարւած նոյն  
ուրուութեամբ և գաղափարներով կը յարին այս կամ  
այն բողոքին ու հրաւերին՝ առանց ազգայնական խարու-  
թեան, բողոքելով նոյնիսկ սեփական երկրի դէմ, եթէ  
այդպէս է պահանջում բարձր արդարութիւնը—այդ  
օրը միայն, ասում ենք, մենք կ'ունենանք բարոյական այն  
մեծ ուժը, որի հետ կ'ապւած պիտի լինի միջազգային  
մամուլի կօնգրէսը, բայց որից նա այժմ կատարելապէս  
զուրկ է, հեռու:

Վշտարհիս երեսին կայ մի հարց—հ ա յ օ ց հ ա ր ց  
է նրա անունը—որը իրօք քաղաքական ցնորքների խնդիր  
է, ալ կուշտուրական մի ժողովրդի գոյութեան խնդիր,  
մի հարց, որ իր ողբերգական բնոյթով արեան և զոհերի  
քանակով պիտի միացնի բոլոր նրանց, որոնք դաւանում  
են արդարութեան և ճշմարտութեան սկզբունքը, մի զրփ-  
բախտ հարց, որ մտացւեց փարիզում մամուլի միջազ-  
գային կօնգրէսում 1900 թւին. որը պաշտօնապէս և  
չճանաչեց Բերնի այս տարւայ կօնգրէսում և երեւի  
չպիտի ճանաչի պաշտօնապէս և գալ տարւայ  
մամուլի կօնգրէսում, որ գումարելիլու է ազատ Վերի-  
կայում: Պաշտօնական, հրապարակային, միաձայն համա-  
կրութեան փոխարէն, կօնգրէսի անդամները — և դեռ  
լաւագոյնները—յո՛վ մասնաւոր, ա՛ն պաշտօն կերպով  
իրենց բարեհաճ արամադրութիւնը յայտնեցին մի ազգի,  
որ այնքան արիւն է տւել, որքան այդ բոլոր գրողները  
միասին. . . թանաք:

Ծաղը, հեգնանք չէ արդեօք այդ դէպի այն մամուլը,  
որի ազատութիւնը ձեռք բերելու համար հերոս նա-  
խորդները նոյնպէս արիւն են տւել. դէպի այն հերոսներ  
երկիրը, որի լեռներում ազատութեան տողեր էին  
վայելում գիւլլոմատ գրաւորները՝ զարծութեան բո-  
ւր լինում էին ժողովները—որը ստեղծւած և մարմնա-  
ցրած է ոչ թէ անհոգի, լուրջ քաղաքագէտների՝ ճա-  
սերով, այլ ազատութեան համար ամէն պարագայում  
կուռը և բողոքող սովորների արեան արդիւնքով:

Եւ եթէ ա յ ս օ ր ե ա ն մամուլը ընդունակ է մար-  
սելու այդ ծայրահեղ դիպլոմատութիւնը, այդ  
վրդովիչ ապականող լուրերն ուրա հ ն ար ձեւը,  
վստահ ենք՝ այդ չի մարսի վաղւան մամուլը, որ ան-  
ջնջելի նախատինք պիտի համարի այս բոլորը իր անցած  
պատմութեան էջերում:

Սակայն երբ պիտի գայ այդ վաղից ազատախօս բա-  
ցարձակ, անկաշառ բողոքի ցանկալի օրը:

Ռ Ռ Ի Ս Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ

Ցարի լայնարձակ կայսրութիւնը այնպիսի վայրկեան-  
ներ է ապրում, որ կարծէք հեռու չէ, ինչպէս գերմա-  
նացիք ասում են, մեծ «Վրդդերագդաչի» օրը: Արդէն  
նշանակալից մի փաստ էր դիտում այն հանգամանքը,

որ վերջին տարիներում յեղափոխական ինտելիգենցիային  
միանում է իր գործօն աջակցութեամբ մեծ քաղաքների  
բանուոր դասակարգը: Այժմ մի նոր տարր է հրապարակ  
գալիս, ամենածանրակշիւր և ամենահաւորը: Դա Գ ի ւ  
զ ա ց ի ու թ իւ ն է:

Այդ հսկայ, իներտ և գերազանցապէս պահպանողական  
ուժը միապետութեան ամուր պատւանդանն էր: Ռուս  
ինտելիգենցիայի, յեղափոխական այդ շնչին փորբամաս-  
նութեան գերմարդկային ճիգերը խորտակում էին միշտ՝  
գիւղացիութեան անասան ապառաժին հանդիպելով:

Ուսանողը, ինտելիգենտը հալածւում էր գիւղացուց,  
իրը միասակար, աղետաբեր ուժ, իրը թշնամի այն  
Վ ի ս ա ս տ ա ծ ի, որի առջև մուժիկը ծունկ էր չո-  
քում կրօնական երկիւղածութեամբ: Ռուս յեղափոխա-  
կաններից ոմանք ծայրայեղօրէն սկիւպիկ էին դարձել  
և կարծում էին, որ հակայեղափոխական մուժիկը այն  
ժամանակ միայն կարող է շարժւել, երբ հանդէս կըգայ  
տարրերային մի ուժ, համատարած մի սով կամ մի պա-  
տերազմ:

Այսօր բաւականաչափ փոխւած է երևում դրութիւնը:  
Անշարժ և անբան գիւղացին սկսում է խլրտալ նրա  
վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, համակրական է  
դէպի ուսանողը: Նա սիրով դիմաւորում է նրա քարոզին  
և ջերմ հետաքրքրութեամբ կարդում է նրա տարածած  
բրօշուրները: Նա ինքը այժմ շատ տեղերում գրկում է  
ապստամբութեան դրօշը՝ տարտամ գիտակցութեամբ՝  
որ այդ ապստամբութիւնը բարիք կը բերէ իր թշաւ,  
կիսաանասնական կենցաղին:

Կայսրութեան զանազան ծայրերից ազդարարում են  
գիւղացիների մասսային շարժումների մասին: Նրանք  
գրաւում են խոշոր կալաճատէրերի հողերը, թալանում  
ու հրդեհում են նրանց ագարակները: Հանգամանքը  
վերին աստիճանի նշանակիչ է այդպիսի հրդեհներով  
են սկսւել բուրժուազական մեծ յեղափոխութիւնները  
Արեւմուտքում:

Գիւղացիական շարժման ալիքները հեղեղել են հա-  
րաւային Ռուսաստանի մի շարք նահանգներ—Պօլտավի,  
Խարկովի, Կիեւի, Չերնիգովի, Վօրոնեժի, Տամբովի, Սա-  
րատովի և շն: Շարժումները նման են ամէն տեղ. գիւ-  
ղացիք ահագին խմբումներով (մի քանի հազարներ ամէն  
մի խմբի մէջ) մօտենում են կալաճատիրօջ ագարակին,  
պահանջում են նրանից՝ ամբողջ ընտանիքով թողնել ու  
հեռանալ: Կալաճատէրը սարսափած՝ փախչում է, գիւ-  
ղացիք բաժանում են իրար մէջ հացը, նախիրը և ուրիշ  
պիտանի գոյքերը. մնացածը աւերում են, տունը հրդե-  
հում և այնպէս գնում: Մարդկանց կեանքի վրայ բնա-  
չեն բռնանում, ամենատուած հողատէրերն անգամ խնայ-  
ւում են:

Յուզումները քանի գնում տարածւում են, և նրանց  
անմիջական պատճառների մասին հարիւրաւոր այլանդակ  
աւաստիչներ են շրջում: Ասում են, օրինակ, որ գիւղերի  
մէջ սպայի համազգեստով պտտում էր մի անյայտ անձ-  
նաւորութիւն և կարդում էր մի մանիֆէստ, որով գիւ-  
ղացիք հրաւիրում էին խլել հողերը: Ուրիշ մի աւաստիչ  
ասում էր, թէ իբր «Կիւրա» | | արտասահման է փախել  
և թէ այժմ թագաւորող Միխայիլը իրաւունք է տւել  
գիւղացիներին գրաւել հողերը, որ հէնց իրենց սեփա-  
կանութիւնն է:

Այդ նոր, չտեսնւած փոթորիկների հանդէպ՝ ուժեղ



ցիան, իհարկէ, սահման չի ճանաչում իր կոյր մուկ-նութեան մէջ: Սարսափելի են ճնշման միջոցները, անխնայ ծեծում են նապայկաներով, չեն խնայում ծերերին, կանանց ու երեխաներին: Ծեծից ազատելու համար շատերը նախընտրում են կախաղանը: Գիւղացիների դիմադրութիւնը առայժմ՝ կրաւորական է. նրանք մերժում են, երբ հրամայում են նրանց ցրել: Մի քանի այդպիսի դէպքերում զօրքը պարպել է հրացանները և շատերին սպանել: Կողակները վարում են ճիշդ քրդերի պէս. գիւղացիներին ամենամանսիրտ կերպով մտրակահարելով՝ նրանք միաժամանակ թալանում են գիւղերը և բռնաբարում կանանց:

Ծեծի սիստէմն է այսօր թագաւորում ամբողջ Ռուսաստանում ծեծում են յաճախ մինչև մահ... .

Սպանած Սիպիագիին յաջորդելով՝ մինիստր Պլեվէ կանցալ մի ահարկու հարածով կանգնեցնել յեղափոխական շարժման սլացքը: Բայց և շուտով ըստ երևոյթին, համոզեց, որ տէնօրի սիստէմը անբան ալ ձեռնտու չէ մտքերը խաղաղացնելու տեսակէտից: Դրա մէջ համոզած է երևում ինքը կայսրը: Եւ ահա արդէն լուր է պտտում, թէ՛ սիկօրա 11, վճռելով որոշ ազատութիւն շնորհել իր հպատակներին, ցանկութիւն է յայտնել՝ քննել Սահմանադրութեան այն նախագիծը, որ մշակել է Լօրիս Մեկքով, 1880-ին, բոլորովին նման պայմանների մէջ...

«ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ» ԿՈՐԸ

«Ներուպայի հայ ուսանողական Կիւթիւնը» ուղղել է մի զեկուցագիր-կոչ, Ֆրանսերէն լիզուով Մամուլի 8-րդ միջադպարին կոնգրէսին, որ տեղի ունեցաւ Բերնում յուլիսի 20-24:

Ուրազներով հայ մամուլի 100-ամեայ պատմութիւնը, զեկուցագիրը ծանրանում է այդ մամուլի ներկայ տխուր, անօրմալ վիճակի վրայ, որ անհրաժեշտ հետեւանք է հայրենիքում տիրող քաղաքական պայմանների, շեշտում է այն մեծ ու ստիպողական պարտաւորութիւնները, որ ունի համաշխարհային մամուլը հայկական ճգնաժամի դիմաց, յիշեցնում է լուութեան այն դաւադրութիւնը, որ եւրօպական խոշոր օրգանները կազմակերպել էին հայոց կոտորածների միջոցին և հրաւիրում է միջադպարին մամուլի ներկայացուցիչներին՝ յանուն մարդկայնութեան սկսել մի ուժեղ պրօպագանդ բոլոր երկրներում ինպատ հայ դատի:

«Աջակցելով հայ ժողովրդի ազատագրութեան՝ բոլոր երկրների անկախ մամուլը կը նպաստէ մի հզօր ու ազատ մամուլի ստեղծման մեր հայրենիքում, որի կոչումը կը լինի՝ տարածել արևմտեան դադափարները ամբողջ առաջուր Ասիայում»:

Կոչը հարիւրաւոր օրինակներով բաժանել էր Բերնի ժողովականներին, ինչպէս նաև զանազան երկրներների լրագիրներին, որոնցից շատերը տպագրեցին այդ զեկուցագիրը ամբողջպէս, համակրական նախաբաններով:

Կոնգրէսի վարիչ Յաննաթողովը յայտնեց «Միութեան» պատգամաւորին — որը անձամբ ներկայ էր — թէ չնայած իր բուն համակրութեան՝ նա՝ պ ա շ տ օ ն ա պ է ս չէ կարող քննութեան դնել հայկական հարցը, իբրև միանգամայն ք ա ղ ա ք ա կ ա ն հարց:

Սակայն կոնգրէսի անկախ անդամները, իբրև քաւումն այդ մեղքի՝ որոշեցին անպաշտօն կերպով յայտնել իրենց համակրանքը հայկական դատին: Տիկին Սիվիլի նախաձեռնութեամբ՝ դահլիճում սկսեց շրջել ստորագրութեան մի թերթ մտաւորապէս հետեւեալ բանաձեով. «մենք բոլոր երկրների հրապարակաօսներս յայտնում ենք ջերմ բաղձանք, որ Բերնի դաշնագրի 61-րդ յօդուածը Հայաստանի մէջ գործադրելով՝ հայ ժողովրդին տրի այդհոյութիւն կեանքի ու ստացածքի»:

Ստորագրեցին 200-ի չափ գրողներ այլևայլ երկրներից: 2եռնպահ մնացողները մեծ մասամբ գերմանացիներ էին:

Ստորագրելով այդ բանաձեւը՝ մի շարք նշանաւոր հրապարակաօսներ յանձն առան իրենց օրգանների մէջ պաշտպանել հայկական ռէֆորմների հարցը ջերմ ու սիստեմատիկ կերպով:

Աւելացնենք և այն, որ կոնգրէսի ստեղծից մի քանիսը իրենց ստորագրութեան հետ միասին յանձնեցին տիկին Սիվիլիին դրամական նւէրներ՝ ինպատ հայասէր պրօպագանդին:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ր

Բերնի միջադպարին խաղաղութեան մտայն Բիլթոն Գետեւալ յիշատակազին է ուղղել Մայիսեան մէմօրիումը ստորագրող պետութիւնների — Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի — արտաքին գործերի մինիստրներին:

Չերդ գերազանցութիւն !

1901 թ. հոկտեմբեր 3-ին մեր բիւրօն իկատար ածելով խաղաղութեան X-րդ համաշխարհային կոնգրէսի մի սրտումը՝ թոյլ էր տւել իրեն Չեր կառավարութեան ուղադրութիւնը հրաւիրել հայ ազգաբնակչութեան թըշուառ վիճակի վրայ: Մենք ձեզ առաջարկում էինք յարգանք՝ դուժարել մի պաշտօնական խորհրդաժողով և լուծել այդ խնդիրը գործադրելով ռէֆորմների այն նախագիծը, որ մշակել էր 1895-ի մայիսին անգլիական, ֆրանսիական և ռուսական կառավարութիւնների ձեռքով և որ հաստատուել էր սուլթանից:

Այն ժամանակից իվեր գրութիւնը բնաւ չի փոխել և նոր կոտորածների երկիւղ կայ, մանաւանդ Սասունի շրջանում:

Այս հանգամանքների մէջ թախանձագին խնդրում ենք Չեր Գերազանցութեանը՝ լուրջ ուղադրութեան աւնել 1901 թ. հոկտեմբեր 3-ի մեր յիշատակագիրը, որ Խաղաղութեան XI-րդ համաշխարհային կոնգրէսը յանձնարարել է մեզ՝ նորոգել ձեր կառավարութեան առջև՝ աղաչելով Չեզ ևս, իբրև պոժամեայ քայլ համաձայնութեան դալ Բերնի դաշնագիրը ստորագրող միւս կառավարութիւնների հետ, որպէս զի Սասունին ամենից մօտ գտնուող Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հիւպատոսները ուղարկին Մուշ, քանի որ միմիայն եւրօպական պաշտօնական վկաների ներկայութիւնը կարող է արգելել այն արիւնոտ անցքերի կրկնումը, որոնք յարուցին ընդհանուր ցասում:

Պատիւ ունինք յայտնելու ձեզ և այլն.

Նախագահ

Պատուաւոր քարտուղար

ՊՐԵՒ. ԲԱԷՐ

ԷԼԻ ԴԵԿՈՄԵՅՈՆ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

## Ն Ա Մ Ա Կ Ա Խ Լ Ա Թ Է Ն

10 մայիս 1902

Քանի տարիներէ իվեր Ախլաթի գաւառակը զօրեւելով յեղափոխական գործող ուժերէ, մնացեր է բոլորովին լուռ իր թշուառութեանց առջև, կը տքայ իր դժոխային տանջանաց մէջ: Անմահ Սերոբ այս կողմերէն հեռանալէ յետոյ, կառավարութիւնը խուզարկութեան պաշտօնը կը յանձնէ չէրքէզ Ալի պէյին, որ ոստիկանութեան հարկւրակետ է և նշանաւոր իր անօրինակ գազանութիւններով: Ալի պէյը իր հետ ունենալով զօրաց բաղմութիւն մը, աննկարագրելի տանջանքներ ի գործ կը դնէ: Փայտերու հարածներու տակ շատերը մեռցնել շատերու ամօթոյքը ոլորել, ամորձիքները թելերով կապել, քաշքշել և լեռնէ լեռ անամօթաբար պտտցնել, հայ կիներու ու հարսներ զօրաց ու խուժանի առջև յայտնի լլկել, կանանց ներքնագրեստներու մէջ կատու ձգելով ծեծել, հայերու ձեռքէն մինչև անգամ դանակներ խլել, վերջապէս այսպէս և աւելի քստմնելի արարքներ կատարելը այնքան սովորական ու բնական դարձած իրողութիւններ եղած են որ, ժողովուրդը այն համոզումը գոյացուցած է թէ, այդ է իր անողոր ճակատագիրը, այդպէս պէտք է լինի իր կեանքի դատաւիճիւրը, սակայն մենք կ'ամչնանք ու կը սարսուխք մանրամասնութեանց մէջ մտնելու ու զայն նկարագրելու: Այդ բոլորը Ախլաթի ժողովուրդի վրայ այնպիսի տպաւորութիւն մը թողած է որ, այժմ ալ դեռ Ալի պէյ, զօրք, կառավարութիւն անունները ահ ու սարսուփ կ'ազդեն: Թէև կայ արդէն թագուռ կայծ մը, կայ ներկայ դրութեան վերջակէտ մը դնելու տենչանքը ժողովուրդի սրտի խորը, սակայն ի՞նչ ընէ այդ ժողովուրդը, երբ ամէն միջոցներէ զուրկ է, տնտեսապէս բոլորովին քայքայուած, ինքնապաշտպանութեան ամէն միջոցներէ զրկուած, կառավարչական ինտրիգներու բոլոր թելերով կաշկանդուած ու սղմած: Մենք ինկատի ունենալով այս դառն կեանքի բոլոր պայմանները կը վճռենք՝ այս վիճակի միակ ելքն է յեղափոխական անդուլ, անխոնջ և լուրջ գործունէութիւնը:

Աշնանս Բուլանըզի կողմէ խուժը մը համիդիէ ձիււորներ անցնելով կողմերս, օրը ցերեկով աւարի կ'առնեն Շամիրամ հայ գիւղէն 36, Զրհոր գիւղէն 31 եղներ: Հայ գիւղացիք կին ու զաւակներով կը վազեն, կը հասնին աւարառուներուն. կ'աղաչեն, կը պաղատեն ըսելով, «գթացէք իսէր Աստուծոյ, մի մեռցնէք մէկ անգամէն մեր երեխաները, գէթ կէսը տարէք, մնացած կէսը թողուցէք մեզ», սակայն քրդերը հեղինական ծիծաղով մը՝ «ո՞ր են ձեր ֆէդայիները, թող գան կուեն, վերագարձեն» կ'ըսեն: Այժմս կըստուգուի որ այդ աւարառութիւնները կառավարութեան բացարձակ հրահանգներով կատարուած են, հասկընալու համար թէ կա՞ն այդ կողմեր ֆէդայիներ, կամ ժողովուրդը արդեօք ունի՞ զէնքի կտոր մը ինքնապաշտպանութեան համար, թէ ոչ: Հայ գիւղացիք երբ կառավարութեան դիմելով այս յայտնի աւարառութեանց մասին կը բողոքեն և մատնանիջ կ'ընեն աւարառուները՝ «մենք չենք կրնար համիդիէներու աւազակութեանց առաջքն առնել» կ'ըսեն ու մէջէն դուրս կ'ընեն:

Ահա եկաւ դարունը, հայ ժողովուրդը բաւական յոյսերով սողորուած՝ կ'ըսպասէ անգութ Եւրօպայէն

գթութեան փշրանքներ: Երբ ժողովուրդի աչքերը յառած են դէպի այդ անսիրտ տիպլոմատները, երբ ժողովուրդի մտքերը զբաղած են ներկայ դժոխային արարքներով, նոյն այդ րոպէին է որ ահա կը վերսկսին նորանոր գազանութիւններ, գողութիւններ, սպանութիւններ, կապուտ-կողոպուտներ:

Ապրիլի 24-ին խուժը մը 2խուրցի քրդեր մտնելով Բաղէշ քաղքէն կէս ժամ հեռու գտնուող Փափշէն գիւղացի Մարգար քահանայի տունը, ուր կը գտնուի եղբոր քահանայի փեսան ևս, կը կողոպտեն տունը, երբ տնեցիք կ'արթնան՝ ճրագ կը վառեն. անմիջապէս կը թափուին քահանայի և փեսայի գլխուն. դաշոյնի ու կացինի մէկ քանի հարւածներով գետին կը փռեն, յետոյ փաթթելով փալասի մէջ կը նստին վրանին, երբ քահանայի հարսն ու աղջիկները հաւար կը կանչեն զանոնք ալ վերաւոր գետին կը տապալեն. քահանայի 7-8 տարեկան աղջիկը լեղապատառ հազիւ դուրս կը պրծնի հաւար կը ձգէ: Գիւղացիք մինչև անգամ չեն համարձակիր աներէն դուրս գալ, վերջապէս տունը բոլորովին թալանելով կը հեռանան: Քահանան մահամերձ վիճակի մէջ է, խելագարուածի պէս քրդերէն «հառա՛, հառա՛» (գնա՛, գնա՛) կը պոռայ ու կը մարի:

Մայիս 2-ին Հասնանցի Համիդիէի խուժը մը՝ յայտնի յարձակումով կը մտնէ Ծաղկէ գիւղացի Պօղոս և Ռաշօ անուն եղբայրներու տունները, կը կողոպտէ բոլոր դոյքն ու կայքը, աւարի կ'առնէ բոլոր տաւար-օջախները, երբ կիներն ու աղջիկները կըսկսին լալ, գոռալ կը կապեն բոլորին, կը փակեն տուններու մէջ ու կը հեռանան: Ասոնք Հասնանցի աշխիթի ցեղապետներէն Բըզախ աղայի հրոսակներն են, որոնք բացարձակապէս կը թալանեն նոյնիսկ քիւրդ գիւղերը, կըսպանեն, կը բռնաբարեն և կառավարութիւնը չուզեր բնու զսպել, կամ առաջն առնել իսկ: Տեսնենք թէ վաղը կամ միւս օր կարգը ո՞ր հայերուն և կամ ո՞ր գիւղերուն կը հասնի:

Կառավարութիւնը փոխանակ գէթ առերևոյթս այս անօրինակ գազանութեանց առաջքն առնելու ձեւնարկ մը ընելու, յայտնի խաղերով ուժ, մղում կուտայ այդ բարբարոս արարքներուն:

Ախլաթի բոլոր գիւղերը զօրքերով լեցուցան, չգիտենք ի՞նչ երազներ կը տեսնէ կառավարութիւնը: Մութը տիրելուն պէս հայ գիւղացիներուն արգիւլած է տուններէն դուրս գալ: Ճամբաները կը հսկեն, պատահող ճամբորդները, կարավանները կը թալանեն: Ո՞վ կը համարձակի բողոք ընել. կամ որո՞ւ բողոքիք:

Դատվան (Ախլաթի գլխաւոր նաւահանգիստ) գիւղի մէջ կան վաթսուն զօրքեր: Զօրապետը կանչելով գիւղի ուես Թառօյին անամօթաբար կըսպանայ. «կամ կին կը բերէք ինձ և կամ գիւղը կ'աւերեմ»: Միթէ՞ գիւղ մը աւերելու համար միջոցներ կը պակսին: Մէկ քանի ստայօգ զօրոցներ յեղափոխական անւան տակ և ահա ամբողջ դաւառ մը ոչնչութեան կը մատնուի: Մայիս 3-4-ի գիշերը այս զօրապետը Աշոտի (Աշոտը հայուիկ էր, որ այրուցաւ Միսոնի հետ մարագի մէջ) այրի կնոջ տունը կը պաշարէ քանի մը զօրքերով, յեղափոխականները փնտնելու պատրուակով: Կինը զգալով իր դառն վիճակը կ'ուշաթափուի, կը մարի. տան ծառան կը յաջողի երգիկէն դուրս ելնել և քանի մը երիտասարդներու տեղեկացնել կը յաջողի Աշոտի կինն չլանով դուրս քաշել ու ազատել: Առաւօտուն զօրապետը քանի մը գիւղացիներ հարցա-

քննութեան կ'ենթարկէ. «ինչո՞ւ հակառակ մեր տւած հրամաններուն դուրս ելած էք տուներնէդ» կ'ըսէ և դաշյոնով կը յարձակի Պօղոս անուն հայի վըայ, զոր հազիւ կ'ազատեն:

Բաղէշի մէջ քանի մը զօրք ֆէդայիի ձևով հազւելով՝ կը պահէին քաղաքի մօտ ձորակի մը մէջ. Մկօ անուն լրտեսի միջոցաւ կանչել կուտան Աւեր մէյտան անուն թաղէն՝ Քօզէ, Սերովբէ անուն և քանի մը ուրիշ երիտասարդներ, որոնք հեռուից ուրախութեամբ մը դարձան, բարով՝ կը պոռան և կը մօտենան կարծելով թէ իրօք ֆէդայիներ են: Սակայն անմիջապէս հասկնալով իրողութիւնը կ'ուզեն փախչիլ հեռանալ՝ իսկոյն կը պաշարւին զօրքերէն, կը ձերբակալուին ու կը տարւին բանտ:

Ահա Ախլաթի ընդհանուր դրուածիւնը, ահա կառավարութեան օյինները, ահա այս գոյութեան կուրի մէջ հայ ժողովրդի ամէնօրեայ տաղանայն ու վիճակը. մենք կորցուցինք ենք մեր ուշքն ու միտքը, մենք շարած ենք այդ անտանելի դրութեան առջև, գլխաւորապէս միայն այն պատճառով որ զուրկ ենք մարտական ուժերէ, զուրկ ենք ձեռնհաս գործիչներէ, մեր բաժինն է միայն մահը. . . Այս պարագային մեր արեան պատասխանատուութիւնը կը ծանրացնենք այն զգայուն սրտերու վըայ, որ գէթ չթողնեն մեզ անպատիւ ու անվրէժ մահուան գիրկն իյնալ:

**Ն Ա Մ Ա Կ Բ ՈՒ Լ Ա Ն Ը Գ Ե Ն**

12 մայիս 1902

Բուլանըզի ընդարձակ դաւառը մէկ քանի քիւրդ աշիրէթներէ շրջապատեալ՝ ենթարկւած է ամենօրեայ հալածանաց, բռնաբարութի, աւարառութեանց ու անվերջ ոճրագործութեանց: Երբէք Հայաստանի ունէ գաւառ չէ մատնուած այնչափ ողբերգական թատերաբեմի, որչափ Բուլանըզի գաւառը: Հոս շարունակաբար կատարուող զարհուրելի արարքները նկարագրել շատ դժւար և առայժմ մեզ համար գրեթէ անկարելի է: Համառօտակի ընդհանուր հայեացք մը ձգելով այդ գաւառի վըայ՝ կ'ուզենք ծանօթացնել մեր հայ եղբայրներուն այդ դժոխքը, որ ցարդ իրար ետեւ և ամէն օր կատարւած են գիււային իրողութիւններ, որոնք բոլորովին խուլ և անյսելի մնացած են:

Բուլանըզի գաւառին տիրող տարրը զլխաւորաբար Հասնանցի կոչուած քիւրդ համիդիէներն են, որոնք յայտնի են իրենց աւարառութիւններով, յարատե ընդհարումներով: Ասոնք սուլթանի ամենասիրելի հերոսներն են. ասոնց ամէն մէկ դժոխային արարքը անբռնաբարելի, անարդել է: Այս աշիրէթի ցեղապետները բացարձակ բռնութեամբ, առանց թրքական օրինական դործողութեան իսկ, տիրացած ու բնակութիւն հաստատած են հայ գիւղերու մէջ: Քիւրդ աղային կը պատկանի հայի հողն ու ամէն ունեցածը, հայի գոյութիւնն ու պատիւն իսկ: Քիւրդ աղան գիւղի մը տիրանալէ յետոյ, այլևս կառավարութիւնը իրաւունք չունի հոն մտնելու, նոյնիսկ կապալի, ոչխարահամարի, տուրքերու ու հարկերու համար պէտք է գիմել քիւրդ աղայի կամքին ու հրամանին: Այս դրութեամբ հիմա Բուլանըզի բոլոր հայ գիւղերը լեցած են այդ վայրենի, ինքնակոչ հիւրերու: Որովհետև քիւրդ ցեղապետները ամենօրեայ ընդհարումներու, կուր

ներու ենթակայ են՝ իւրաքանչիւր աղան հարկադրուած է պահել իր հրամանի ներքև: Հարիւրաւոր ծառաներ, տարով բոլորին հագուստ, ձի, զէնք, ուտեստ, մինչև անգամ անոնց ընտանեաց բոլոր կերակուրները: Այդ անտուն, աշխատութեան բնակին անընդունակ բարբարոսները կը բնակին հայ տուներու մէջ: Այժմ հայը որ չունի իր բնակավայրէն զատ բնակութեան ուրիշ շէնք, անպայման կերպով պարտաւոր է պահպանել իր ընտանեաց ծոցը, թոնիրի կողքին քիւրդ ընտանիք մ'ալ Լալ կարկանդակ անոնց հագուստները, կերակրել զանոնք, պահել անոնց ձիեր, ոչխարատաւարները և անոնց կեանքի վայելքի համար ամէն զոհողութիւն ընելը՝ նւիրական պարտք մը դարձած է հայի համար: Քիւրդ ցեղապետներու համար դիւցազնութիւն կը համարուի միշտ կուրի իրար հետ, և իրարմէ խլել ժառանգական իրաւունք սեպած այս կամ այն հայ գիւղը: Այսպիսի ընդհարումներու ժամանակ հայերը պարտաւոր են վճարել անոնց փամփուշտներու գինն անգամ: Հայ գիւղացին իրաւունք չունի իր աղջիկն ու զաւակն ամուսնացնել առանց աղայի կամքին: Կը թողունք անցեալի մէջ կատարւած անվերջ բռնաբարութիւնը, յայտնի առեւանդութիւններ, բռնութեան և ճնշման տակ եղող կրօնափոխութիւններ և միայն ներկայիս մէջ կատարւած մէկ քանի քստմեղի արարքներով կը բացատրենք Բուլանըզի ընդհանուր վիճակն ու դեռ շարունակուող կացութիւնը:

Մայիս 2-3-ին Հասնանցի քիւրդ ցեղապետներէն Բըզախ աղան Խանօղլի հայ գիւղին վըայ այնքան ճշնշուններ իգործ կը դնէ որ գիւղացիք կըստիպուին թողնել տուն ու տեղ, հող ու ջուր և հեռանալ. այդ պարագային Բըզախ աղան դիմելով Մանազկերտի բերդը, կառավարութեան կը բողբէ հայերու դէմ. «հայերը յատուկ դիտումով կը հեռանան, և իւրաքանչիւրի վըայ մեծ առնելիքներ ունիմ, ետ վերադարձուցէք» կ'ըսէ. որ կառավարական պաշտօնեան կը համարձակի աղայի խօսքին ու կամքին հակառակ բան մը արտասանել: Խանօղլի գիւղացւոց բոլոր բողբները անյսելի կը մնան, ծեծի ու սպառնալեաց ներքև յետս կը վերադառնան: Գիւղը դեռ չհասած, ետևներէն Բըզախ աղան ալ կը հասնի. ժողովելով գիւղացիներու գեղեցիկ սեռէն եօթ հարսներ կը լեցնէ տուն մը. կը մտնէ նախ ինքը. ծեծի տակ կը լլկէ. բոլորն ալ ուշաթափ գետին կը փուլին. դուրս կ'ընէ և կը հրամայէ ծառաներուն ներս մտնել. . .

Նոյն օրեր միևնոյն աշիրէթի ցեղապետներէն Մէհմետ Էմին աղան, Շէյխաղուպ հայ գիւղացւոց կը յանձնարարէ բոլոր լուծքերը տանիլ և իր համար առանձին վարուցան ընել: Գիւղացիներէն Մատաթ Գրիգորեան անուն հայը, չլսելով աղայի հրամանը, կը գնայ իր արտը վարելու: Աղան անմիջապէս ծառաներ ուղարկելով կը հրամայէ արտի մէջ սպաննել. խեղճ գիւղացին հեռուէն տեսնելով այդ վայրենիները կըզգայ իր վիճակի դաւնութիւնը, կը թողու արօրն ու մաճը՝ կը փախչի. քիւրդը կը հետապնդեն, մէկ քանի հրացանի գնդակներով կը վիրաւորեն, հայը կը յաջողի հասնիլ գիւղի մէջ և իյնալ ուժասպառ:

Տէրըքի հայ գիւղացիք անցեալ տարւընէ իվեր դատ բացած են Բըզախ աղայի դէմ, որ կը սպահանջէր հայերէն գիւղի իրեն՝ յանձնել. կառավարութիւնը քաշքշելով ու քաշքշելով յետաձգեց հայերուն վճռական պատասխան մը տալ: Բըզախ աղայի եղբայր Ֆէդուլահ պէյը, որ համիդիէի գայմազամ է, մէկ քանի քիւրդերու կը հրամայէ գնալ և ինպատ Բըզախ վկայութիւն տալ թէ



Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Զ Ն Կ Ա Յ Ե Ն

18 մայիս 1902

Տնտեսական վիճակը հետզհետե կը վատթարանայ, արհեստաւորները ամենայնպէս նիւթական անձկութեան մէջ օրը օրին ապրելու վրայ միայն կրնան խորհիլ կարելի չէ ունենոր ձեռնարկի կամ ճարտարաւեստի նոր ձիւղի փորձ մը ընել: Գրամական և ընկերային յոռի պայմաններու հետեանքով, տեղական արտադրութիւնները բացարձակապէս յետնեալ վիճակ մը ունին, ու շահ չեն կրնար արտադրել: Գործաւոր դասակարգը հաղիւ թէ ապրելու չափ սնունդի մը անհրաժեշտ օրոգէքը կրնայ ձեռք ձգել: Բարեբախտաբար այս տարի ձմեռը մեղմ անցաւ, եթէ ոչ սովալլուկներու վոհմակը պիտի բազմապատկէր. կարելի է իբր աստիճանաջափ կամ իբր վիճակագրութիւն նկատել տեղոյս աղքատախնամ ժողովի գործառնութիւնները, որոնք տարւէ տարի կնձռոս ու տխուր հանգամանք մը կըստանան դիտողին համար: Դասակարգերու տարբերութիւնը գտնել այս երկրին մէջ շատ դժուար գործ է, այնքան որ ամէնքն ալ հաւասարապէս անկուտի վիճակ մը ունին:

Երկրին մէջ անցուդարձը բոլորովին դադրած է, ունէ անցագիր առնողի համար հարկ է որ 6-7 հոգի անձնապէս երաշխաւորեն: Հոս այս տարւած տուրքերը, որոնք տարեգումս են (մարտ) ալ երկու ամիս ետքը պիտի հաւաքէին ըստ օրինի կամ ըստ սովորութեան, փետրւարի մէջ հաւաքել սկսան ամենայն սաստկութեամբ, մնացածներն ալ մինչև մայիս պիտի հաւաքեն վերջացնեն կ'ըստի, և սակայն զինուորականներու և քաղաքային պաշտօնեաներու դիզած ամսականները չի տրեցան Գուրպան պայրամի առթիւ:

Տուրքերը գանձելու համար հարկահանները կը խորհին և կը գործադրեն նոր եղանակներ, որոնք իրենց կարգին հանձարեղութեան գրօշմը կը կրեն: Տան կահարասիները յափշտակել սովորական դարձած է զիւղերը, բարեբախտաբար արդէն շատեր զուրկ են արժեքաւոր գոյքեր ունենալէ: Գանձումի կերպերուն մէջ զարձակ կողմերն ալ չեն պակսիր, ինչպէս՝ Մթննի գիւղ, 10-15 անձեր 3-4 օր նեղ սենեակի մը մէջ բանտարկելէ ետք, հարկահանները երբ կը համոզին թէ կուտ մը գանձելու իսկ ճարը չի կայ, կը հանեն զանոնք իրենց բանտէն ու բռնի ջուրով զարնել տալով պարել կուտան: Գերջանի գիւղերէն մէկին ամբողջ նախիրը գայմագամըզը (Մամախաթուն) կը տանին, 30 ոսկի գանձելի տուրքի մը փոխան աճուրդով ծախելու համար ամբողջ 150-ի չափ եղ կով, ձի, ոչխար և շն: Գիւղացիները նեղը մնացած փոխառութեան կը զիմեն ու հաղիւ թէ ծանր տոկոսովը կրնան 20 ոսկի մը մէջտեղ բերել, կը տանին կառավարութեան, որ մնացորդ 10 ոսկին ալ կը պահանջէր դարձեալ, ու երբ ալ անկարելի կըլլայ այն ալ վճարել, բոլոր անասունները կէս արժեքով կը ծախւին ու ամբողջ դրամը տուրքերու ի հաշիւ կը տրուի: Արիշ գիւղի մը մէջ ով որ անկարող կ'ըլլայ պարտքը վճարել, ձմրան ցուրտին դուրսը կը հանեն, խոշոր յարդի սակառի մը տակ կը դնեն ու վրայէն պաղ ջուր կը լեցնեն օրական 2-3 անգամ: Տրւած ծեծերու մասին գրել անդամ

դերկու հազար հինգ հարիւր ոսկույ գումար մը պահանջ ունի Բըզախ աղան Տէրըքի հայերէն: Կը տրուի այդ վկայութիւնը, դեռ դատը կը մնայ անորոշ: Գիւղացիք հարկադրուած կը պահեն 50-60-է աւելի կանոնաւոր զօրք, չեն համարձակիր երբէք գիւղէն հեռանալ, մասնաւորապէս պարագլուխ համարածները բոլորովին բանտարկութեան դատապարտուած են իրենց տներու մէջ: Մուացած ապրուստն ու հացը՝ կը ջանան կերպով մը իրենց գոյութիւնը քարշ տալ: Չեն վարեր, չեն հնձեր, միայն կըսպասեն կոտորելու, սպանելու, կողոպուելու համար: Անցեալ աշունէն իվեր Տէրըքէն սպաննուած են երեք հայեր, որոնց անունները այսօր չկրցայ ստուգել:

Նոյն աշիւթի ցեղապետներէն Միւլէյման աղան այնքան կը նեղէ Լաթար հայ գիւղացիները որ, բոլորը կը դաղթեն և Խնուսի մէջ բնակութիւն կը հաստատեն: Անցեալ ամրան գիւղացիները ցանքերը քաղելու կը վերադառնան: Միւլէյման աղան անոնց գալը լսելով՝ ծառաներով կ'իջնէ գիւղ ուր հայերը չունենալով ընտանիք, տնական կահ-կարասիք, միայն էրիկ մարդիկ, չեն կրնար, սովորութեան համաձայն, պատուել կերակուրներով ու նւէրներով: Քրդերը կերակուր ընելէ յետոյ կը հեծնեն ձիերը ու կը հեռանան. դաշտի մէջ կը պատահին Օհաննէս անուն երիտասարդի մը, որ սայլով ցորեն բերելու կերթար, կը յարձակին վրան, հրացանի գնդակներով կը ծակծկեն երիտասարդի մարմինը և դիակը շտկելով սայլի վրայ, կը հեռանան: Գոմէշները սայլը կը տանին ուղղակի արտը, ուր հնձողներ կարծելով թէ քնած է տղան, կը կանչեն որ արթննայ և չթողնէ գոմէշները ցորենի դէզը ուտեն, երբ շարժում ու պատասխան չեն գտներ, կը վաղեն ու կը տեսնեն Օհաննէսի արիւնաթաթաւ դիակը:

Ահա վերջին օրինակ մ'ալ քիւրդ տարրի բարբարոս, վայրենի, և թիւրք կառավարութեան թոյլ, անզօր և անամօթ նկարագրին:

Մանազկերտի բերդի մէջ կը բնակի կանոնաւոր զօրաց հրամանատար մը: Վերոյիշեալ Բըզախ աղան տեսնելով քիւրդ հրամանատարի գեղեցիկ աղջիկը՝ միջոցներ կը փնտռէ ձեռք բերել գայն: Հրամանատարի տուն գտնուող սպասուհի հայ կինը կանչելով, կ'առաջարկէ միջնորդի դեր կատարել: Սպասուհին շարած կը մնայ երկու կրակի մէջ: Վերջապէս իր սպասուորութեան մէջ անհաւատարիմ չգտնելու համար, կը յայտնէ հրամանատարին իրողութիւնը: Բըզախ աղան լսելով հայ կնոջ արարքը՝ ծառաներով կը պաշարէ անոր տունը, կ'առեանդէ պառակինն ու անոր հարսները, այդքանով չբաւականացած՝ կը պաշարէ հրամանատարի տունն ալ և կը բռնաբարէ անոր աղջիկն ալ: Հաւար կը հասնի զօրաց ընդհարում տեղի կ'ունենայ, երկու զօրք վերաւոր կ'իյնան, Բըզախ աղան կը յաջողին ձերբակալել: Հետեւեալ օրը հրամանատարը վախէն իր տունն առնելով կը հեռանայ, իսկ Բըզախ աղան ազատ կ'արձակուի... ըստ սովորութեան:

Մանազկերտի բերդը կը պատկանի Բըզախ աղայի եղբոր Ֆէրուլահ պէյին, թէև հոն կայ կառավարական զօրաց բանակ մը, թէև գայմագամախոս է, սակայն ամէն մէկ որոշումներու համար պարտաւոր են զիմեւ Ֆէրուլահ պէյին կամ ցեղապետներու կամքին ու վճռին:

Ահա այս յայտնի ու գոխային ծրագրերով մեծ Մարդասպանը բնաջնջ կ'ընէ հայ գիւղերը, կ'ոչնչացնէ հայ տարրը, կը պղծէ հայ ընտանիքի սրբութիւնն ու պատիւը...

չարժէք, անոր զանազան տեսակները հասարակ բաներ մը դարձեր են...

Անցեալ իրիկուն քանի մը զինւորներ, դէն ի ձեռին, քաղաքիս Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ ժամուորին վրայ կը յարձակին, յիկեպուրլարի քեսէճէկիդ պուալով, քանի մը երիտասարդներ հագիւ կարող կ'ըլլան զիրենք կեցնել մինչև ոստիկանութեան հասնելը, որ գալով զինւորները աղատ կարձակէ. այդ պահուն տեղի ունեցածը կրնաք երևակայել. եկեղեցական արարողութիւնը կը խանգարի, կինները վայնասուն կը փրցնեն, իրարանցուցը ամբողջ քաղքին մէջ կը տարածուի, կարծելով թէ դարձեալ թիւրքերը հայերուն թաղը յարձակեր են:

Այս օրեր Բաբերդի կողմերն ալ հարստահարութիւնները իրենց ծայրագոյն աստիճանին հասեր են, այնպէս որ երկու հայ գիւղեր, 500 հոգիէ բաղկացած, չի կրնալով տոկալ տո՛ւրքերու գանձումին համար ի գործ դրած ճնշումներուն իսլամութիւնը ընդունելու տրամադիր կը ցուցնեն զիրենք. ու այսպէս քանի մը օր յետագայէն ետք, երբ որ քաղաքէն թիւրք մօլլաներ, դատի ելն, ըստ պատշաճի, ձեւակերպութիւնը կատարելու կերթան, գիւղացիները տեղւոյն կառավարչին աղբըսագիր մը կուտան թէ կը փափաքին հաւաքաբար կուսակալին ներկայանալ, իրենց իրական վիճակը անձամբ հասկըցնել կարենալու համար. գործը կուսակալութեան կը տեղեկագրուի ու չենք զիտեր տակաւին թէ ինչ հրահանգ տրւած ու ինչ կարգադրութիւն եղած է:

Իսկ օրական կեանքին մէջ, գիւղերը կամ քաղաքը, եղած բռնաբարութիւններուն չափ չի կայ. ամէն մէկ քայլափոխից, անհատական կեանքի գայրացնող անիրաւութիւններ կը կրկնուին ու կը կրկնուին ինչ և է պարագայի, հայ անունը կը բաւէ իր վրայ հրաւիրելու համար կամ հայհոյութիւն մը, կամ արհամարհոտ վարմունք մը, կամ ծեծ մը, կամ նախատինք մը: Մէկը որ քիչ մը արժանապատուութեան ղգացմունք կը կրէ, անկարելի է որ դիմանայ օրւան մէջ անհատներու կողմէ եղած զըրկանքին ու հալածանքին. ատելութեան ու վճճիմնորութեան նոր խաւ մըն է որ կը բարդուի ու կը ղգայուն հայի հոգիին խորը:

Հոս 20-ի չափ բանտարկեալներ ունինք քաղաքական յանցանքով, որոնց վիճակը իրապէս աղէխարշ թշուաւութիւն մը կը ներկայէ, որչափ իրենց երկարատե բանտարկութեան, նոյնքան իրենց չքաւորութեան ու երևակայելի բանտային ամենայնօրի պայմաններուն պատճառաւ: Մարդկային ղոհներ, որոնք ճիշդ կենդանի թաղածի մը կը նմանին, սա տարբերութեամբ որ, իրական թաղած մը մէկ երկու ժամէն հրաժեշտ կուտայ կենդանական աշխարհին. իսկ ասոնք տասնեակ տարիներու մէջ հետըզհետէ դանդաղորէն ու հաւաստի կերպով իրենց փճացումին իրական ու բարոյական մահուան ակնատես ըլլալու դժբախտութիւնը ունեցեր են: Այդ տասը տարիներու մէջ 20-30-ի չափ ալ մահեր տեղի ունեցեր են բանտի նկուղներու մէջ. արդէն բանտարկեալներէն կէսէն աւելին ֆիլիքթայէն բոլորովին քայքայած են ու մնացածներն ալ իրենց թարմ երիտասարդական շրջանն փճացուցեր են ու կը փճացնեն այդ դարշելի վայրին մէջ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՆ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԽԻՅ

13 յունիս 1902

Հինգ օր առաջ Շիկակ Մարզէկցի քիւրդերը (Շարաֆ բէյի մարդիկ) կողոպտեցին Խօյի մօտերը գտնուող պարսկաբնակ Փասակ գիւղը ու տարան 100 տան ամբողջ ոչխար-տաւարը: Աերադարձին ճանապարհին հանդիպելով դէպի Անթուրը դնացող կարավանին՝ թալանեցին նրան: Այդտեղ գտնուում էին երկու զինագործ հայեր՝ Բարա և Շահէն անունով. նրանց գոյքերն ու իրեղէնները առնելուց յետոյ՝ երկուսին էլ սպանեցին:

Բայազէտից գրում են, որ տաճիկ զօրքերը վերսկսել են իրենց անկարգութիւնները պարսկական սահմանագլուխներում. անցեալ աշնան էր որ մի քանի ընդհարումներ տեղի ունեցան Աւաջուղի խաների, տաճիկ զօրքերի ու խուժանի միջև. երկու կողմից էլ սպանութիւններ եղան. վերջապէս դրութիւնը հանդարտեց: Այսօր կրկին Ձէքի փաշայի եղբայրը շարունակում է իր օյինները. նա արդէն պարսիկ է տուել պարսից սահմանի վրայ գտնուած Բալասօր անունով գիւղը և տաճիկ զօրքերը կենտրոնացրել է այդտեղ: Պարսից խաները անզօր են խնդիր յարուցանելու ու դիմադրելու, իսկ կառավարութիւնը անձարակ ոչ մի կերպ չի կարողանում կարգի բերել սահմանի այդ կնճռոտ խնդիրները: Այդպիսով նա կամաց կամաց խրախուսում է տաճիկներին առաջ շարժւելու ու բռնութիւններ գործելու: Բայազէտում ապրող խեղճ պարսիկ հիւպատոսը չի իմանում ինչ անի. նա հագիւ իր գլուխն է պահում. ո՞վ է լուում նրա ձայնը, դանգատը, բողբոջը. քանի անգամ անպատել են խեղճին: Անտէր մարդ է, ինչ անի. եթէ մի քիչ էլ յանդուգն լինի, արդէն փէր թէրը կը հանեն, վայր իր գլխին կը գայ...

Ձգերիէ գաւառի (Տիգրանակերտի կուսակալութեան հարաւարեւելեան կողմը) յայտնի ասպատակիչ համիդիէի դայմագամը՝ Միրանցի քիւրդ ցեղապետ Մստաֆա փաշան բռնել բանտարկել է, ցմահ բանտարկութեան դատաւիճիւ տալով: Իր տան գոյքը տաճիկ կառավարութեան կողմից աւարի է մատնւել:

ՆԱՄԱԿՆԵՐ ԱԼԱՇԿԵՐՏԵՆ

1

3 ապրիլ 1902

«Գայլը ամպ օր շուռ կուգայ». — Ալաշկերտ և Բայազետ դաւառակները, եթէ տարին անգամ մը աւրելէն դեռ նոր աչք բացեր և քիչ մը շունչ առեր էին՝ յանկարծ 95 թւականի Բ. Դունէն դուրս եկած հայերը կոտորելու ֆէրմանի անմիջական գործադրութեան անհամբեր սպասող խուժից ազգը՝ իր լեռնական վստահներով, գաւառիս հայաբնակ գիւղերու և գիւղաքաղաքներու մէջ թափւելով կրկին անգամ աւերեցին, փարախներու մէջէն տաւար ոչխարներու հօտեր յախշակեցին, դաշտերու մէջ հնձողները մօրթելով՝ հասունացած արտերը հրոյ ձարակ ըրին, վերջապէս անագորոյն Համիդի սպանդանոցի դուռը զարնող ողորմելի հայերը, մի անգամ հանգրստութեամբ օր ու արև չտեսան...

Մարտ 3-ին Ձիլանցի աշերէթի յելուզակապտներն

Ելիպ փաշայի եղբոր որդին Ռաշխո բէկը կէս հօխայ սապօնը բռնի առնելու միջոցին՝ սպաննեց Մանկասար գիւղացի Յարոյի Մարտօնը և անոր 15 տարեկան որդին: Մերձակայ Գարա-Քիլիսէ գիւղաքաղաքի կառավարիչը առ երեսս ոճրագործը ձերբակալելու համար, հետապնդող հեծելազօրքը միշտ դուրս կը հանէ, որոնց միակ նպատակն ալ արդէն մինչև հայոց գիւղերը հասնելն և անոնց հացով իրենց սովալլուկ փորերը կշտացնելն է: Թէպէտ կառավարութենէ ալ ղովաճ ըլլան զօրքերը՝ անոնց յատկապէս պատուէր կը տրուի իսլամական կրօնի պարտքը լիովին վճարող մը բնաւ չքերբակալել և հայերը տարօրինակ ճնշումներով տանջել: Որովհետև քաջ գիտեն որ այլևս հայերը գողթելու անարգ ճանապարհը պիտի չտեսնեն, մերժեր են այդ ստորնութեան ուղին և մինչ ի մահ ընտրած են քրտինքը և արիւնը միմեանց հետ խառնելով տոկար, իրենց ագարակը վարել և անով իրենց հացը պատրաստել: Արգարագատ կառավարիչը սպանուողներու աղքատ գերդաստանին 3 ոսկի ծախքն վճարել տուաւ: Կառավարութեան ամբողջ հոգասիրութիւնը ուրեմն ատոր մէջ սահմանափակեցաւ, աւելցնելով թէ՛ «մի վախնաք, ասկէ ետքը ձեր տանը մէջ այսպիսի դէպքեր չպիտի տեղի ունենան... Բայց դուք ալ խոհեմ եղէք, քանի որ ժամանակը գէշ է»:

Բայաղէտը Արարատեան նահանգի արևմտեան հարաւային ծայրն է, քաղաքի և իր դաւառակի մէջ կը բնակին Ձէլալցի և Հայտարցի ըսւած քիւրդ ցեղեր, այս ցեղերու պետերը (էլ-աղասի) ունին առանձին կազմած աւազակային խմբեր, որոնք շարունակ Ռուսիոյ և Պարսից սահմանները ասպատակելով բազմաթիւ աւարներով կը վերադառնան իրենց էլ-աղասիներուն գիրկը: Եթէ կառավարութիւնն ալ հասկնայ, մաս մ'ալ անոր բաժին կը հանուի, որով կը գոցուի խաղաղութիւնն վճարող բերանները: Անցեալները Բայաղէտի մերձակայ Արծափ հայաբնակ գիւղի գիւղապետ Գալուստի եղբոր որդի Պօղոս անուն երիտասարդը սպաննեցաւ Հայտարցի Սէյիդ աղայի վրանի մօտ, իսկ մարմինն ալ անդամ-անդամ յօշոտուած վրաններէն հեռու Ծաղկոտ (Ալա-տաղ) լեռան խոր վահրուն մէջ գանկեցաւ: Կառավարութիւնը ոճրագործէն քանի մը ոսկի փախցնելու յուսով ուղեց ձերբակալել վայն:

Գաւառիս ամբողջ հայաբնակ գիւղերը զօրքերով լեցւած են, անթուրի տառապանքներ հայերու վրայ թափելէ զատ՝ հայ կանայք և աղջիկներ ալ բռնի իրենց ծնողներու և ամուսիններու գրկէն կը խլեն: Անցեալ և ներկայ տարւած մէջ բռնի թիրաքացուցին երկու աղջիկ և մէկ կին Մուսուն գիւղէն, Իւչ-Քիլիսեցի Եղիազարեան Նուարդ աղջիկը և Եօնձալեցի Տէր-Յովհաննէսեան Գոհարը, ամուսնացեալ:

Փետուար 23-ին Ալաշկերտի Ամաս գիւղի մէջ բնակող զօրքը, տեղոյն Գրիգոր անուն հայի աղջիկը բռնի կը փախցնէ, սակայն գիւղի տանուտեր Յովհաննէսի քաջալերական խօսքերը և յաւաջ վաղելը՝ տեղական երիտասարդութեան գրգռելով՝ զօրաց ետեւէ կը պնդեն, գերիվարեալն յետ կըստանան, այդ միջոցին երկուստեք կուրը անշուշտ տեղի կուենան, ուր կը վերաուրուին զօրքերէն երեք հոգի, իսկ հայերէն ոչ մէկ: Թօփուրգ-Գալէի կառավարութիւնը այժմ՝ գիւղի հայերէն 9 անձինք բանտարկելէ զատ՝ յետ առնուած աղջիկն ալ կը պահանջէ:

Հայ անուն կրող ճանապարհորդի մը գիւղէ գիւղ երթալ խստիւ արգիլուած է, արգիլուած է նաև երկու

մարդկանց միմեանց հետ խօսելն անգամ: Համիդիէ քրդաց և կանոնաւոր զօրաց գործ դրած ոճիրները միմեանց հետ խառնելով կը տքնին կոտորածի յաղութունին դոհացներ:

II

13 ապրիլ 1902

Նախապաշարուած ժողովուրդներու վրայ հոգևորականութեան արգեցութիւնը չարաղէտ եղած է միշտ և ամէն տեղ: Նոյն բանը գոյութիւն ունի քրդական ցեղերուն համար ալ, որոնց վրայ շատ զօրաւոր կերպով կ'իշխեն բազմաթիւ շէյխեր: Այս հոգևորականութեան թիւը հետզհետէ կը շատնայ ու երկրին ամէն անկիւնները անոնցմով կը վիստան:

Նալիֆայէն, Մէքքէյէն, Մէտինէյէն ու սուրբ գերեզմանէն տեղեկութիւններ կուտան անոնք, և իսլամին փառաւոր դրախտին նկարագրութիւնը կ'ընեն:

Այդ տեսակ տեսարանի մը ականատես եղայ անցեալ օր, շէյխ մը հայ գիւղէ մը կանցնէր: Շէյխը ինք, նիհար ձիու վրայ նստած էր, դէմքը սև քօղով սքողուած և սպիտակ վերարկուով փաթուած: Քիւրդ ամբողջ, տասնէ աւելի ֆախիրներու առաջնորդութեամբ շէյխին կը հետևէր, ալլա՛հ, ալլա՛հ, ալլա՛հ, ես Ալի, ես Մէհմէդ սարսափելի գոռում գոչուներով: Այս արարողութիւնը չորս հինգ ժամու ճամբայ կը շարունակուի, կատղած գաղանի նման բերանին փրփրեցնելով: Հայը ողջ թողնել, անոր հետ խօսիլ, իսլամին և սրբազան զուրանին համար ամենէն մեծ սրբապղծութիւնն է շէյխերու քարոզածին համեմատ:

Իսլամական այս հրէշային մոլորանդութիւնը հայերը սարսափի մէջ ձգած է: Աերջըս մանաւանդ հայ տարրին կացութիւնը շատ սուր կերպարանք ստացած է, սահմանները անթիւ զօրքերով ու քիւրդ համիդիէներով լեցւած են: Կարինէն եօթը-ութը վաշտ զօրք հոս պիտի տեղափոխուին, փոքրիկ առիթ մը բաւական պիտի ըլլայ ամէն բան տակն ու վրայ ընելու համար:

Պայաղէտի բանտարկեալներէն Տ. Յակոբ քահանան և Նաչատուր անունով մէկը յաւիտենական բանտարկութեան դատապարտուեցան:

Կառավարական պաշտօնեաներուն դէպի հայը ունեցած թշնամութեան չափ չկայ, մեղապարտութիւնն ու ոճրագործութիւնը անհրաժեշտ է որ հայի վրէժն ծանրացնեն: Պէտք է ամէն տեսակ տանջանքի ենթարկել զայն, ջարդ ու փշուր ընել, սպաննել, բնաջնջել: Եւ անտարակոյս քիւրդը այս տրամադրութենէն լիովին կ'օգուտի, ազատ ասպարէզ տալով իր բոլոր չարիքներուն ու եղեռնագործութիւններուն:

Քանի մ'օր առաջ, սուլթանի վայրագ զինուորները օխայ մը արևուի համար աղքատ և մուրացիկ հայ մը սպաննեցին դաշոյնի ահուկի հարածներով:

Հայ գիւղերուն մէջ զօրքերուն թիւը երթալով կը շատնայ, ընկերացած միշտ համիդիէներու արիւնարբու վոհմաններուն: Տարածայնութիւնները բազմաթիւ են, ինչ մտադրութիւն ունենալին դաղտնի կը մնայ: Տուրքերը խիստ ծանր են և անոնց պահանջումը մտրակի անգուլթ հարածներով կը կատարուի: Աերջապէս հային համար կեանքը անկարելի դարձած է վայրենութիւններու այս հեռաւոր աշխարհքին մէջ:

# Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Դ Ա Ս

Այս տարի վերջացան երկու նշանաւոր պատերազմներ՝ չինա-եւրոպական և անգլո-բոսնիական: Երկուսն էլ մղուում էին հեռու Եւրոպայից: Երկուսի էական պատճառն էլ նոյնն էր—Եւրոպայի նւաճողական ձգտումը և դիմադրողների ինքնապահպանութեան տենչը: Երկուսի վախճանն էլ նոյնը եղաւ—պարտութիւն դիմադրողների համար:

Բայց ի՞նչ ասագին տարբերութիւն:

Մի տեղ կուում էր աշխարհիս ամենամեծ և ամենահին աղբը՝ թուով 400 միլիոն, և կուում էր ոչ միայն իր կատարեալ անկախութեան, այլև ինքնուրոյն դարգացման համար: Միւս տեղ՝ հազիւ 1 միլիոն բնակիչ ունեցող երկու փոքրիկ հանրապետութիւններ էին պատերազմ վարում ներկայիս ամենահզօր պետութեան, ծովերի թագուհի Բրիտանիայի դէմ, որ հաշուում է 390 միլիոն բնակիչ:

Չինաստանում պատերազմը տևեց 8 ամիս և 100,000 դիսցիպլինի վարժ ու լաւ զինւած եւրոպա-ձապոնական բանակը ջախջախեց մի քանի հարիւր հազարաւոր չինական զօրքը, որին միացած էր չին հայրենասէրների միլիոնաւոր բանակը:

Աֆրիկայում 30 հազար անձնէր «գիւղացիների» միութիւնը դիմադրեց 200 հազար անգլիական զօրքին, նշանաւոր յաղթութիւններ տարաւ և... պատճառելով Անգլիային գրեթէ 5 հազար միլիոն ֆրանկի ասագին ծախքը, հասցրեց նրան վերջին հարիւր տարւայ ընթացքում չտեսնուած ֆինանսական տագնապի:

Չինաստանը զրկւեց իր մեծ, թագաւորական տան համար նախկին Մանչուրիայից, աւերւեց ու կողոպտւեց «ձերմակ սատանաներից», վճարեց մօտ 2 հազար միլիոն ֆրանկ պատերազմական տուգանք:

Հարաւ-աֆրիկեան հանրապետութիւնները կորցրին իրենց քաղաքական անկախութիւնը, բայց պահեցին ներքին ինքնավարութիւն. ոչ միայն չվճարեցին տուգանք յաղթողներին, այլ ընդհակառակը ստացան 30 միլիոն ֆրանկ իրենց աւերւած կալաւածները վերականգնելու համար:

Չինաստանը կրեց անպատուութիւն, նւաստացաւ. հայրենասէր բոքսերների պարադոլուներին նա յանձնեց թշնամուն՝ մայրաքաղաքի հրապարակի վրայ գլխատելու համար: Նա արտօրեց թագաժառանգի հօրը՝ Թուանին և զօրքի հրամանատար Տուենֆուսեանին: Գլուխը ծռած, թէև վրէժ-լնդրութեամբ լի, չինացին հարկադրւած է այսօր համակերպել յաղթողների բոլոր պահանջներին, ընդունել նրանց և լաւ և վատ հրամանները: Ոչ ոք չգիտէ հաստատապէս, կը պահէ՞ արդեօք իր միութիւնն ու անկախութիւնը այդ վիթխարի և ամենահին պետութիւնը:

Բօէրները «de jure» յաղթւեցին, բայց «de facto» յաղթեցին: Նրանք ստիպեցին թշնամուն յետ վերցնել արւած սպառնալիքները և կատարեալ ազատութիւն տալ բոլոր կուռողներին, շատ քիչ զիջելով «պայտամբ անգլիացի հպատակների» վերաբերմամբ:

Բօէրների հրամանատար Բօտա, Դիլարէյ, Դէվէտ խոստովանում են այսօր, որ թէև անկախութիւնից զերկելու թղթի ստորագրութեան օրը ամենածանր օրն էր

իրենց կեանքում, թէև նրանք ցած դրին զէնքերը և խոնարհեցրին իրենց դրօշակը, բայց էլի մնում են նոյն բօէրները, չեն հրաժարուում իրենց աւանդութիւններից ու սովորութիւններից: Այս խօսքերի հետ հաշուում է նրանց թշնամի Չամբերլենը, քաջ կուռողներին հօլանդացիներին հետ միասին ծափահարում են և անգլիացիք:

Տարակոյս չկայ, որ վաղ թէ ուշ ամբողջ հարաւային Աֆրիկան կազմելու է մի մեծ ու հզօր աֆրիկեան դաշնակցութիւն, Աւստրալիայի և Կանադայի պէս, որի կապը մայր երկրի հետ լինելու է անւանական և հիմնւած միմիայն փոխադարձ շահերի վրայ: Ո՞վ աւելի մեծ դեր կը խաղայ այդ ապագայ մեծ պետութեան մէջ, անգլիական ցեղը թէ՞ հօլանդական—դա հարց է: Յամենայն դէպս, եթէ մի հարիւր տարուց յետոյ Աֆրիկական Դաշնակցութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգների պէս մտնէ մրցութեան մէջ և սպառնալիքներ արձակէ իր վաղէմի մետրոպօլիս—XXI դարու աֆրիկանդները «փառքով ու պատուով» միայն կը յիշեն այսօրւայ կուռող բօէրներին: Այո՛, «փառքով և պատուով», որովհետև թզուկ լինելով հանդերձ՝ նրանք ցոյց տւին մեծ ոգի՝ մեծ քաջութիւն ու հաստատակամութիւն, մեծ ասպետութիւն ու դիսցիպլին, գրեթէ չը տեսնուած սէր դէպի հայրենի երկրի ազատութիւնը:

Այդ յատկութիւնների շնորհիւ էր, որ փոքրիկ ու անյայտ բօէրները պատմութեան մէջ դարձան մեծ և նախանձելի բոլորի համար. այդ յատկութիւնների բացակայութիւնն էր, որ ընկճեցրեց «ծագող արևի» գունդ ազգին:

Դեռ պատերազմից առաջ երբ անգլիացոց միջամտութիւններն ու Չեմսօնի արշաւանքը մի կողմից և Կիսօ Չաուի զբաւումն ու անվերջ եւրոպական արտօնութիւնները միւս կողմից՝ գուշակել էին տալիս երկու երկրների ինքնուրոյն կեանքին սպառնացող փոթորիկը — Աֆրիկայում ու Չինաստանում նկատուում էր չափազանց տարբեր վերաբերմունք դէպի ինքնապաշտպանութեան միջոցները: Երբ սիրոյ գաղափարի և մակաբայցեւոց պատմութեան վրայ կրթւող բօէրները զարգացնում էին ամբողջ երիտասարդ սերնդի ֆիզիքական ու զինւորական ճարպկութիւնը, իւրացնել էին տալիս նրան տեսնիքական ամենավերջին նորութիւնները—չինացիք իրենց փրկութիւնը որոնում էին կղզիացման մէջ, կրթութեան ամենամեծ ուժը տեսնում էին Կօնֆուցիօսի գրւածքների սքօլաստիքական մեկնութիւնների մէջ և իրենց գլխաւոր յոյսը դնում պատերազմի Աստուծո անւամբ կատարուող զօհաբերութիւնների վրայ:

Վերջին տարիները, երբ բօէրների պետութիւնը զբաղւած էր լուռ ու մունջ զինւորական պաշար դիզելով և ցեղակից պետութեան հետ դաշնակցութիւն կոելով, չինացի մանդարինները վիճում էին միմեանց աստիճանները որոշող գնդակների մասին և խոշոր կաշաւքներ անելով՝ հայրենի երկրի արտօնութիւնները մաս մաս ծախում էին իրենց թշնամիներին:

Պատերազմը անխուսափելի դառնալուն պէս փոքրիկ հանրապետութիւնները մի հօգի և մի մարմին դարձած՝ բռնում են յարձակողական դիրք և հէնց սկզբից հասցնում թշնամուն զգալի հարւածներ, կենտրոնացնելով պատերազմը հակառակորդի հողի վրայ:

Պատերազմի նոյն շրջանում չինական իշխանական տան մի մասը գլուխ է կանգնում հայրենասէր բօքսերներին, միւսը ուտելիք է մատակարարում պաշարւած դեսպան-

ներին: Նահանգապետներից մեկը ուժեղորո՞ւմ է Ամուրի ափերը, միւսը թէյ խմում թշնամի հիւպատոսների հետ: Հիւսիսում հայրենասէրները ընկնում են հազարներով, հարաւում ժողովուրդը զբաղւած է առօրեայ աշխատանքով և չգիտէ նոյնիսկ պատերազմի մասին:

Պատերազմի երկրորդ շրջանում, երբ գրավւեցին Պրետորիան ու Պէկինը, երբ ապացուցւեց ուժերի անհասարկութիւնը և ճակատ առ ճակատ կռիւն անկարելիութիւնը, — փոքրիկ բոէրները, յանձնելով ագարակները կանանց, պատերազմի դաշան են հանում բոլոր ուժերը, նախագահից սկսած մինչև 14 տարեկան տղաները և կանոնաւոր պատերազմը վերածում միմեանցից համարեա անկախ, այլևայլ կազմի խմբակների անկանոն կռիւ: Քարուրանդ անելով երկաթուղիները, կողոպտելով պաշար տանող գնացքները և անկնկալ յարձակումներ գործելով այս ու այն յարմար դէպքում, բոէրները ձգձգում են պատերազմը ամսից ամս, տարեց տարի և, կարծես, անվերջանելի են ուզում դարձնել: Այլ է դրուժիւնը ծայրագոյն արևելքում. «իշխանական» տունը ծպտեալ փախչում է երկրի խորքերը, շատ քիչ տեղեակ պատերազմի ելևէջներին: «Մեծին հնազանդւելու» սկզբունքը իրենց կուռք դարձած՝ կառավարիչները հէնց առաջին պարտութիւնները կրելուց՝ փախչում են ալ ու ձախ: Հայրենիքի սեր չունեցող զինուորները տեղ-տեղ դառնում են աւազակներ ու կողոպտում են մայրենի երկիրը: Հարաւի նահանգապետները հրաժարում կամ դանդաղում են զօրք ուղարկել վտանգի ենթակայ հիւսիսին, համարձակի արածը քանդում է երկչոտը և մի քանի ամսում մեծ երարիտական շինաստանը կորցնում է իր գլուխը, ենթարկւում է կատարեալ անիշխանութեան:

Յաղթութեան հազարգիւտ ընկնելով միմեանց ու ֆանատիկոս շինացի գաղանձութիւններ է կատարում ձեռքը ընկած քրիստոնիստների և եւրոպացիների վոյս, սովամահ անում դեսպանատների մէջ պաշարած կանանց ու երեխաներին և բնական դուռնք յարուցանում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ: Միևնորս պարագայում քաջ բոէրները սիրով խնամում են իրենց ձեռքերն ընկած վերաւորներին, նոյնիսկ ազատ թողնում թշնամու վիրաւոր ու գերի բռնւած զօրապետին և իրենց ասպետական վարքով արժանանում են ամբողջ աշխարհի բուն համակրութեան:

Հետևանքը ակներև է: Մեծ թւով բայց փոքր ոգով շինաստանը մի քանի ամսում յաղթւում է Ֆիզիքապէս ու բարոյապէս և մնում խաղալիք խորամանկ դիպլոմատների և փարիսեցի միսիոնարների ձեռքում:

Փոքր թւով բայց մեծ ոգով բոէրները յաղթւում են առերևոյթս, բայց յաղթում իրականապէս: Շնորհիւ իրենց բարոյական բարձրութեան, համերաշխութեան և հազարգիւտ վճռականութեան, նրանք պահպանում են իրենց ինքնավարութիւնը և հաւասար իրաւունքները յաղթողի հետ:

Իրենց եղակի, դիւցազնական կուռով բոէրները տւին պատմական մեծ դաս թէ հլօր պետութիւններին և թէ փոքրիկ ճնշւած ազգերին. նրանք ցոյց տւին, թէ ինչ վիժխարի գործօն է բարոյական ուժը և թէ ինչ գնով կարելի է զօհել հայրենիքի ազատութիւնը:

Թ Ե Ր Թ Օ Ն

Հ Ա Յ Ա Ս Ե Ր Ն Ե Ր Ի Կ Օ Ն Գ Ր Ե Ս Ը

(ՆԱՄԱԿ ԲՐՈՒՍԵԼԻՑ)

Առաջին անգամն է, որ Հայաստանի վեհանաձեռն բարեկամները զանազան երկրներից համախմբւում են ընդհանուր խորհրդակցութեամբ հայ ժողովրդի տառապանքներին դարման գտնելու:

Հայաստանի այս առաջին կօնգրէսը կատարելապէս աջողւած պէտք է համարել և, ինչպէս որ դուշակում էր մեր թանկագին բարեկամ Քրանսիս դը Պրէսանսէն՝ նա ունեցաւ Լուրպայի մէջ աւելի մեծ շառաչում, քան թէ սպասում էինք: Անարժան մամուլի ներկայացուցիչ մի քանի թերթեր Գերմանիայում ու Ռուսաստանում՝ զբրբւած ամենաստոր նկատումներից՝ ձգնում են նետաձգել կօնգրէսի հմայքը, ձգնում են մեղմել հայոց աղէտները և դրա հետ մղմել սուլթանական պատասխանատուութիւնը... Փոյթ է: Հայկական դատը ունի իրեն պատւար՝ բոլոր երկրներին ազնիւ, անկաշառ մամուլը, որը այսուհետև պիտի շարունակէ աւելի ազդու ճշգրտութեամբ պաշտօնական և քաղաքակիրթ ժողովուրդներին հայաստանցու ողբը:

Կօնգրէս գումարելը՝ նոյնիսկ բերդական ազատ հողի վրայ՝ շատ էլ դիւրին չէր: Պէտք եղաւ յաղթահարել մի շարք խոչընդոտներ: Թիւրքական ազնուները գործի վրայ էին. Երզրզը հրահանգել էր ամէն միջոց գործ դնել՝ կօնգրէսը վիժեցնելու: Բերդիական կառավարութեանը ապարդիւն դիմումներ անելուց յետոյ՝ Միւնիք պէյի մարդիկ որոշել էին կաշառել բոլոր պանդոկապետներին: Վաշառման գործը ըստ երևոյթի մնալ էր դնու, որովհետև շատ տեղերում իրաւ որ մերժեցին կայմակերպող Յանձնաժողովին:

Դահլիճը այնուամենայնիւ դանւեց և սուլթանական ծառաները Ֆիսափո կրելով՝ խորին արդահատանք միայն յարուցին Եւրոպացի հայաստանների մէջ:

Շերքէկ կոչւած արուարձանում La Tourelle ընդարձակ սրահի մէջ յուլիս 17-ին, 150 հոգու չափ երկսեռ բաղումթեան ներկայութեամբ, բացւեց համաժողովը: Շերքէկի քաղաքագլուխը իր հովանաւորութեան տակ է առել հայասէր կօնգրէսը: Սրահում տիրում է մեծ կենդանութիւն: Աջքի են ընկնում եւրոպական պերճախօսութեան փայլուն աստղերը՝ Ժան Ժոսէս, Լամիլ Վանդերվլէդ, տիկին Սեվրին: Վան գիտութեան ու հրապարակախօսութեան այնպիսի պատկառելի ներկայացուցիչներ, ինչպէս Լիլիգէ և Լիլի Ռէկլիւ, Քրանսիս դը Պրեսանսէ, Բերնար Լազար և ին:

Սրահի մուտքի առջև ոստիկաններ են դրւած, որոնք հսկում են շրջակայքում վնասող թիւրք լրտեսների վոյս: Հուշակաւոր նիկոլայիդէս, ոսկու փայլեց կուրացած այդ ստոր յոյն ցրւել է տալիս կօնգրէսիստներին իր աղտոտ թերթի (L'Orient) համարները, ուր ներքոյում է սուլթանի հայրախնամ կառավարութիւնը Հայաստանու:

Սրահի մէջ հանդիսականներին բաժանում են «Դրօշակ»-ի խմբագրութեան և Հնչակեան կենտրոնի ներկայացրած դիկուցումը, ապա մի քանի բրօշուրներ, որոնց թւում՝ Բերնշտայնի տպած բանախօսութիւնը՝ «Հայ ժողովրդի տառապանքները և Եւրոպայի պարտաւորութիւնները» խորագրով:

Սենատոր Հ ու զ ո դ ը Լ Ե Տ Է նախագահում է. նա



որչունում է այն հաղարաւոր մարդկանց, որոնք Եւրօպայի բոլոր երկրներէր իրենց կողմնակցութիւնն են յայտնել հայկական դատին. շնորհաւորում է մասնաւորապէս դանիացիներին, որոնք նախաձեռնող եղան ներկայ ժողովին:

Ապա կարդացում են կօնգրէսին ուղղած մի շարք համակրական նամակներ ու հեռագիրներ՝ Կլեմանտից, Գլխուրնէլ զը Կօնստանից, զը Ռօբէրտից, Գարրիէլ Աէայից, Զեմն Բրայսից, Մակ-Վօլից, Էդուարդ Բերնշտայնից, Կեւրօպայի Հայ Ուսանողական Միութիւն՝-ից և հայկական գաղութներէր՝ Լեզիպոսից, Բուլղարիայից, Բուկովինայից, Ամերիկայից:

Այնուհետև բեմ է բարձրանում «Պրօ Արմէնիա»-ի խմբագրապետ Պիէռ Քիառ և դահլիճի խորին ուշադրութեան մէջ աշտասանում է իր յուզիչ ճառը: Պաշտօնապարտ, առանց ծայրայեղ ու մոլեգին դարձածներէր վերլուծում է նա հայկական դժոխսային իրականութիւնը: Փաստերը՝ գրեթէ ամբողջապէս քաղած պաշտօնական աղբիւրներից՝ ցնցում են հանդիսականներին:

Հայկական հարցի լուծման համար երկը հնարաւորութիւն կայ, ասում է Քիառ.

- 1) Ժողովրդի կատարեալ բնաջնջում.
- 2) Հայաստանը Ռուսաստանին միացնելը.
- 3) Ղարչական ռէֆօրմներ:

Հայերին Ռուսաստանին յանձնելուց՝ զեկուցանողը ոչ մի բարեք չի սպասում բազմատանջ ժողովրդի համար: Մնում է ուրեմն վարչական ռէֆօրմների ճանապարհը. և այդտեղ Քիառ պաշտպանում է «Դրօշակ»-ի խմբագրութեան մշակած ծրագիրը, որը անցեալ տարի ներկայացած էր միևսուր Դելեգատէին և որը պահանջում է իմիջի այլոց, հաստատել Հայաստանում եւրօպական չէզոք մի ազգութեան պատկանող կառավարիչ:

Բուռն ծափահարութիւնների մէջ Պիէռ Քիառ իջնում է ամբիօնից: Նրանից յետոյ բեմ է դուրս գալիս Սեվրին և մի ազգու ճառով նշաւակում է մամուլի այն ներկայացուցիչներին, որոնք վաճառականական ստոր նկատումներով՝ լուծութիւն էին պահում հայկական սարսափների ժամանակ:

Հետևեալ օրը երկար ու բարակ խոր հրդակցութիւնից յետոյ՝ կօնգրէսը որոշում է ընտրել մի յանձնաժողով, որը թէ պիտի կապ հաստատէ զանազան երկրներում գործող հայասէր կօմիտէների մէջ և թէ միջոցներ պիտի ձեռք առնէ՝ ազգելու հանրային կարծիքի, պարլամենտների ու կառավարութիւնների վրայ:

- Այդ յանձնաժողովի անդամներ ընտրեցին.
- ՓրԱՄՍԻԱՅԻՑ. — Դընի Կօշէն, Լավիս, Գլխուրնէլ զը Կօնստան, Սանրա, զը Պրեսանտէ, Վազէյ:
  - ԲԵՂԳԻՍՏԻՑ. — Լըժեօն, Նախկին միսիստր, Հուգօ զը Լեյնէ, սննտոսի անդամ, Լաֆօնտէն, պարլամենտի անդամ:
  - ՀՕԼԼԱՆԳԻՍՏԻՑ. — Շէպման, Տրօլտրա, Լեֆտինգ, Վասսէ Մալիստ, մանդերֆուզտ:
  - ԳԵՐՄԱՆԱՅԻՑ. — Լուվիզ ֆօն Բաք, Փօստեր, Բէքէ և Բերնշտայն:
  - ԻՏԱԼԱՅԻՑ. — Ընրիկօ Փէրրի և Մօնիստ:
  - ՆԵՂԼԱՅԻՑ. — Սիօտ շօլէն, Նօրմէն, Մակ-Վօլ Բօորնս, Հարդի, Զէմն Բրայս, Բեօնտինգ, Ստեֆանսօն, Պէրմօն:
  - ԱՌՍՏՐԱՅԻՑ. — Բարոնուէի Զուտներ և զօրոտր Ալէք:
  - ԴԱՆԱՅԻՑ. — Էէննինգս, Հալ, Բեննդիկսէն:
  - ՇՎԷՅՏԱՐԱՅԻՑ. — Լարդի և Կիւրտէն:

Երկրորդ օրւայ հետաքրքրական անցքն էին Ժօնէսի և Պրեսանտէի ճառերը:

Ժօնէս ամբիօն բարձրանալով՝ յայտնեց որ Քրանսիայի սօցիալիստական կուսակցութեան անունից է խօսում:

«Ուրախ եմ, ասաց հռչակաւոր տրիբունը, որ հայկական հարցը դուրս է գալիս մթութեան ու անտարբերութեան շրջանից:

«Սկզբներում, երբ ինդիլը դրած էր երկնոտ կերպով, պ.պ. Դընի Կօշէն, զը Մեօն և ես վրդովեցինք, տեսնելով մամուլի մի խոշոր մասի լուծութիւնը՝ Փոքր Ասիայում կատարող մասսային դադանութիւնների դիմաց: Այդ գձուձ, ստրկական մամուլը լուռ էր մնում, որովհետև եթէ քննէր իրողութիւնները, չպիտի համարձակէր փաստաբանել յօգուտ սուլթանի:

«Յաճախ ես լսում եմ, թէ ինչպէս ժողովուրդների կարեկցութիւնը հակադրում են կառավարութիւնների յանցաւոր անտարբերութեանը. . . Ժողովուրդները, որոնք իբր թէ յուզում էին միջազգային այդ մեծ ոճիրներից, նոյնքան յանցաւոր են իրենց անտարբերութեամբ, որքան և կառավարութիւնները, և այդ իսկ պատճառով դառնում են այդ վերջինների մեղսակից:

«Այստեղ՝ 61-րդ յօդուածը պարզ վկայում է մեր պահանջների օրինաւորութիւնը: Նրանով մենք կարող ենք իրականացնել համաձայնութիւնը՝ ազգերի իրաւունքի և մարդկային խղճի ձայնի: Նրանով մենք հրաւիրում ենք կառավարութիւններին՝ յարգել մարդկութիւնը և յարգել իրենց:

«Կամաց-կամաց առասպելները փարատում են, նախապաշարմունքները մեղմանում: Մի քանի ժամանակ գերմանական սօցիալիստական կուսակցութիւնը վարանոտ դիրք ունէր հայերի վերաբերմամբ: Նա կարծում էր, թէ ազգիտացիան գալիս է դրսից: Նա Ռուսաստանի ձեռքն էր տեսնում այդտեղ, որովհետև այդ խնդրում, ինչպէս և սպիրիտիզմի յայտնի ժողովների մէջ մի որոշ մօտէնտում թուում էր, թէ անյայտ ձեռքեր շարժում են դէպի ամէն կողմ:

«Բերնշտայնի յօդուածները, ճառերը և նրա նամակը փարատում են այժմ ամէն երկդիմութիւն: Գերմանական ժողովրդի աչքերը բացած են և Ռէյնի միւս կողմի մեր սօցիալիստ եղբայրները արձագանք կը տան մեր հրաւերին:

«Խնչպիսի դիրք կը բռնէ արգեօք Ռուսաստանը Հայաստանի վերաբերմամբ: Ես համարձակում եմ ասել, որ նա կախած է Քրանսիայի բռնելիք դիրքից: Առանց այդ երկու ազգերի կորովի միջամտութեան՝ հնարաւոր չէ ֆրանսուսական դաշնակցութիւնը, քանի որ նա հիմնւած չի լինի արդարութեան և մարդկային անբռնաբարելի իրաւունքների վրայ:

«Կրկնում եմ, մենք չենք ուզում պատերազմ, որովհետև նրանով մենք թուիչք կը հաղորդէինք որսի բոլոր թռչուններին, որոնք հսկում են մեծ թագաւորութիւնների ծոցում: Մենք պատերազմից աւելի լաւ բան ունենք մեր ձեռքում. մենք ունենք դիւանագիտական մի բնագիր:

«Ես կարող եմ՝ պնդել առանց թթու հայրենասիրութեան, որ Քրանսիայի վրայ մեծ յոյսեր ունեմ՝ Եւրօպայի հանրային կարծիքը հաւաքական գործունէութեան հրաւիրելու համար:

«Նա շուտով կը կրկնապատկէ հիւպատոսների թիւը Հայաստանի մէջ: Դա մի սկզբնաւորութիւն է. չպէտք է նա կանգ առնէ ճանապարհին, այլ պէտք է աւելի հեռու գնայ, եթէ չի ուզում դաւաճանել պատուոյ այն օրինագրքին, որը դարերից իվեր կապում է նրան աշխարհի ճակատագրի հետ»:

Գահիճը որոտագին ծափահարութիւններով համարութեան ցոյցեր է անում հռետորին:

Քրանսիս դը Պրեսանս է հետևում է նրան. նազ պերճախօս, բայց խոր հիմնական ծանօթութիւններով և քաղաքագէտ-մտածողի պատկառելի տեսքով՝ Պրեսանսէն հմայում է հանդիսականներին:

«Խնդրի միջազգային բնաւորութիւնն է, որ այսօր համախմբել է մեզ այստեղ և նրա մասին է, որ պիտի խօսուի: Մեր քեզարկած որոշումով արձանագրում ենք, որ ֆրանսիական ու ռուսական հիւպատոսարանների թիւը աւելանում է Հայաստանի մէջ: Այդ վերջին քայլը ինքնաբերաբար չկատարեց, այլ հետևանք էր այն դիմումների, որ պարլամենտի մի քանի անդամներ արին Դելկասէին, հիմնելով իրենց պահանջները այն հանգամանքի վրայ, որ Փոքր Ասիայի կոտորածները վկայ չեն ունեցել մինչև օրս: Մինիստրը ուղարկեց հիւպատոսական գործակալներ և խոստացաւ բացի այդ՝ շօջապատել խժոճութիւնների կենտրոնը պահականոցների մի գօտիով, որոնք պիտի հսկեն հրաբխային վայրի վրայ և պիտի ձեռք առնեն անհրաժեշտ միջոցներ՝ ժայթքումների առաջն առնելու համար: Մենք պահանջում ենք, որ բոլոր պետութիւնները ձեռք առնեն նոյն աման միջոցներ:

«Եւրոպական ազգերը Բերլինի դաշնագրով դրել են սուլթանի վրայ որոշ պարտաւորութիւններ: Յանկարծակի բոլոր դիւանատները դադարեցին հսկելու նրանց գործադրութեան վրայ: Այն ժամանակ մարդիկ հարցրին պատճառը այդ յետագարձ ընթացքի: Պատասխանը եղաւ՝ թէ քանի որ հայեացքների տարբերութիւն է առաջացել զանազան կառավարութիւնների մէջ, պէտք է բաւականանալ գործողութեան մի միջինումով, բաւականացան պալիատիվներով, կիսատ քայլերով, մարդասիրութիւն էին անում և ոչ դիպլոմատութիւն: Պէտք է դիմել ազգութեան գործողութիւններին:

«Մենք կարողացանք ասել պ. Դելկասէին. «Պետութիւնները չափազանց տարօրինակ մի բան են արել: Նրանք յանկարծ թողել են Բերլինի դաշնագրի իրաւական հողը: Սուլթանը ուրեմն շատ դիւրին կերպով կարող է ասել ինքն իրեն, «քանի որ ինձնից չեն պահանջում ոչ մէկը այն երաշխաւորութիւններից, որ ես պարտաւոր եմ տալ իմ պարտքն էլ չէ ձեռնարկել նրանց գործադրութեան»:

«Սուլթանը — այդ լաւ յայտնի է ամէնքին — հասկանում է այն ժամանակ միայն, երբ կորովի կերպով պահանջում են նրանից նիւթական կամ բարոյական պարտքեր և երբ այդ պարտքերի հատուցումը հարկադրաւոր է՝ զրահաւոր նաւերով, այդ դէպքում նա հնազանդւում է: Բայց սոսկ ազգաբարձութիւնները մարդասիրութեան ու ազատութեան անունով՝ նրա համար անհասկանալի խօսքեր են միայն. պէտք է գործել:

«Մեր դէմ ձեւակերպում են որոշ առարկութիւններ, որ պէտք է յետ մղել: Մեզ ասում են թեթեւ սրտով, դուք շատ բարի դիտաւորութիւններ ունիք, բայց եղէք գործնական և ուրիշ ոչինչ մի պահանջեցէք, բացի նոր փոխանորդող գործակալներ ուղարկելուց. անհնարին է ձեզ ցանկալ իրագործած տեսնել ուրիշ ուէ բան: Շատ լաւ, մեր նպատակն է՝ գործադրել տալ Բերլինի դաշնագիրը և ձեռք բերել Հայաստանում համաձայն բարեկորդութեան, շնորհիւ իրաւական այն վկայագրին, որ մեր ձեռքի տակ է:

«Մի ուրիշ ճշմարտանման առարկութիւն ևս. անհնարին է, ասում են, յոյս դնել եւրոպական համերգի վրայ, քանի որ, ինչպէս տեսնում էք, համաձայնութիւն չկայ նրա մէջ և նա տապալկոււմ է անելանելի ճահճի մէջ:

«Ճիշդ է, որ վերջին յոյն-թիւրքական պատերազմի միջոցին եւրոպական համերգը վիժեց: Ճիշդ է, որ գերմանական ու աւստրիական կայսրութիւնները այդ խնդրում Թիւրքիային նպաստաւոր վերապահում ունեցան և հրաժարեցին միջամտել յօգուտ խաղաղութեան:

«Բայց այն ժամանակ ի՞նչ արին ուրիշ աղգերը: Նրանք ուշք չդարձրին և շարունակեցին իրենց գործը: Քրանսիան, Ռուսաստանը, Իտալիան, Անգլիան շարունակեցին գործել և յայտարարեցին Արեւտէի ինքնավարութիւնը: Պարզ է ուրեմն, որ մի ազգի թերացումը չի վարակում միւսներին:

«Պէտք է գործել անյապաղ, չկայ ոչ մի ընդունելի պատճառ, որ մենք չ'աշխատենք վերջ տալ այն գաղաւթութիւններին, որոնք արիւնոտում են Հայաստանը»: (Երկարատեւ ծափահարութիւններ):

Որոշումները քեզարկելուց և դանիացիներին ու կադմակերպող յանձնաժողովին շնորհակալութիւն յայտնելուց յետոյ՝ նախագահը յայտարարում է կօնգրէսը փակած:

Չմոռանանք յիշել, որ մամուլի պրօպագանդին վերաբերող որոշումը քեզարկելու միջոցին՝ տիկին Սեվրին վերսկսելով իր մոլեգին պարսաւականը յայտնի մամուլի դէմ՝ առաջարկեց հետեւելը:

«Որպէս զի մեր ընդունած որոշումը լինի գործնական, ասաց նա, ես առաջարկում եմ օրաթերթերի մի ցուցակ կազմել իրենց հրատարակիչների անուններով, որոնց կը խնդրուի անձնապէս՝ հրատարակութեան տալ հաղորդած տեղեկութիւնները: Այդպիսով դալ տարւայ կօնգրէսին կարելի կը լինի հրապարակով նշաւակել այն լրագրատէրերի անունները, որոնք չեն կատարի այդ խնդրերը»: (Բուռն ծափահարութիւններ):

Բրիւսէլը նշանակեց կեդրօնավայր, ուր կը գումարել յաջորդ տարւայ կօնգրէսը:

Պիէռ Բիառ, իբրև ներկայացուցիչ մնայուն կօմիտէի պիտի հաստատէ մշտնջենական կապ նրա անդամների միջև:

Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Կ Ո Չ Ը

«Դրօշակի խմբագրութիւնը ևւ Հնչակեան կուսակցութեան կենտրոնը հետևեալ ընդամուռը կոչու են ուղղել Բրիւսէլի նոյն-սէրների կօնգրէսին:

Պ ա Ր Օ Ն Ն Ե Ր

Հիացումի և խոր երախտագիտութեան զգացումով ողբւնում ենք ձեզ՝ կուռղ ու տանջող հայ ժողովուրդի անունից:

Համաշխարհային եսամոլութեան և ուէակցիայի այս ժամանակներում միտթարական է տեսնել՝ ամէն դաւանանքի պատկանող մարդկանց այդ գեղեցիկ շարքը, որոնք նպատակ են դրել փաստաբանել աշխարհի առաջ այնքան ողբերգական և այնքան վաղուց լքած մի դատ:

Իբրև ներկայացուցիչներ հայ ժողովուրդի մարտնչող մասի՝ մենք չենք գալիս պատմելու ձեզ այդ ժողովուրդի

երկարատե մարտիրոսութիւնը. դուք ամէնքդ այդ գիտէք և, վերջապէս, կօնգրէսի մէջ հեղինակաւոր և աւելի պերճաբոս ձայններ՝ կ'անեն այդ աւելի լաւ, քան մենք:

Մենք միայն թոյլաւորութիւն ենք խնդրում մեր կարծիքը ևս յայտնելու կօնգրէսի բուն առարկայի մասին, բացատրելու մի քանի խօսքով մեր հայեացքները այն միջոցների մասին, որոնցով կարելի է վախճան գնել բնաշնչման ենթակայ մի ժողովուրդի տառապանքներին:

**Պ ա Ր Ո Ն Ն Ե Ր,**

Մի քսան տարի սրանից առաջ հայ ժողովուրդը, նոյնիսկ նրա ամենալուսամիտ տարրերը, հաւատացած էր, թէ մի զուտ խաղաղասիրական պրօպագանդ բաւական է՝ եթէ ոչ վերակազմելու թիւրքահայաստանը հաւասարութեան ու արդարութեան հիմքերի վրայ, գէթ իրագործելու բարեօրումների այն միտումով, որ մեզ տւել է Բերլինի դաշնագիրը:

Անցքերը շուտով հաստատեցին այդ հաւատի միամիտ լինելը: Արդարև, տարիները անցան զուր ու ցաւագին սպասումի մէջ: Արտասահմանի մեր հայրենակիցները կազմակերպեցին միանգամայն խաղաղ մի պրօպագանդ՝ դիւանագիտութեան վրայ աղբջու. նպատակով: Կազմում էին անդադար արձանագրութիւններ, դիմումներ էին անում արտաքին գործերի մինիստրներին, պատկերացնում էին հայ ժողովուրդի անտանելի վիճակը... Բոլորը ապարդիւն: Դրութիւնը չէր փոխուում Հայաստանի մէջ:

Պաշտօնական Եւրօպայան խուլ էր ձեւանում այն ժողովուրդի արդար պահանջների դիմաց, որին նա վերցրել էր իր հովանաւորութեան տակ և որը միայն մէկ բան էր պահանջում -- ապրել ապահով:

61-րդ յօդուածը մնում էր ողբալի կեղծիք և միայն աւելի էր ծանրացնում հայկական ճգնաժամը, զայրացնելով բունաւորին, հրելով նրան դէպի սոսկալի ոճիրներ, որոնք յայտնի են:

Թուսախափութիւնը ծանր էր: Հայ ժողովուրդը, սուլութանների այդ դարաւոր ու հաւատարիմ հպատակը, ի վերջոյ կորցրեց իր համբերութիւնը: «Ուայեան» ըմբոստացաւ: Հայ ինտելիգենտները, նոյնիսկ ամենախաղաղասէրը նրանց մէջ, հասկացան վերջապէս, որ Եւրօպայան արիւն էր պահանջում, որ միմիայն ղինւած պայքարը կարող է մղել դիպլոմատիային դէպի միջամտութիւն:

Կուրը հարկադրում էր: Պէտք էր նախ և առաջ պաշտպանել դաշտի խաղաղ աշխատակորին ընդդէմ բարբարոսների -- քրդերի կամ թիւրք ղինուորների -- որոնք ամէն օր խլում էին նրանից իր աշխատանքի արդիւնքը, տանջում ու մահով էին սպառնում նրան, բունաբարում էին նրա աղջիկներին, ոտի տակ էին տալիս նրա բոլոր սրբութիւնները՝ առանց երբէք պատժելու, կամ գէթ փնտրելու մահմէդական իշխանութիւններից:

Այդ տեսակ հանգամանքներում ապստամբութիւնն իսկ դառնում է հրամայական անհրաժեշտութիւն:

Եւ ահա առաջ եկան կոմիտէներ՝ ժողովուրդի պաշտպանութիւնը կազմակերպելու համար: Նրանց պահանջները շատ համեստ էին. նրանց ուզածն էր ինքնավար մի Հայաստան՝ եւրօպական հսկողութեան տակ, -- անհրաժեշտագոյն պայմանը երկրի բնականոն զարգացման համար:

Այդ կոմիտէները երբեմնապէս բռնում էին նաև յարձակողական դիրք, օգտւելով բարեպատեհ առիթից՝ եւրօպական միջամտութիւն հրաւիրելու:

Դուք հաւանօրէն կը յիշէք այն արիւնոտ ցոյցերը, որ տեղի ունեցան Կ. Պոլսում, 1890-ին Գում-Գափուի մէջ, 1895-ին Բ. Դրան առաջ, Օսմանեան բանկի գրաւումը 1896-ին, Զէյթունի հերոսական ապստամբութիւնը 1895-ի վերջերում, Խանասորի ճակատամարտը 1897-ին, ապա հրաշալի դիմադրութիւնը անվախ Սերորի ու իր խմբի և նրա յարողը Անդրանիկի, որը դեռ այս րոպէիս իր թուզկան խմբերով գտնուում է Սասունի լեռներում:

Դուք կը յիշէք նաև պետութիւնների երբեմն կորովի միջամտութիւնը, իբր հետևանք այդ յեղափոխական կռիւների: Եղան վայրկեաններ, երբ անողորմ ճակատագիրը ժպտում էր Հայաստանին. աւաղ, դա միայն պատրանք էր: Եւրօպայան չէր մեց ճնշողական միջոցների -- միակ լեզուն, որ հասկանալի է Երբբոլում: Նա գոհացաւ ձեւակերպելով պլատօնական ցանկութիւններ՝ 1895 մայիս 11-ի ռեֆորմների հուշակաւոր նախագծով:

Արդիւ Համիդը քաջալերւած պետութիւնների դձուձ կռիւներից՝ վճռեց վերջ դնել հայկական խնդրին և հրամայեց կոտորել մեր հարիւր հազարաւոր հայրենակիցներին:

Եւ «կարգը» վերահաստատեց Հայաստանում: Լուսութիւնը տիրեց, որպէս գերեզմանատան մէջ: Դա ամենահոգելի հակահարւածն էր, որ երբևիցէ տւել է բունաւորութիւնը ազատութեան ձգտող մի ազգայնութեան:

Մեծ կոտորածները, մի քանի տարիների կարմիր ու ճերմակ տէնօրը չկարողացան անդամալուծել հայ ցեղի սքանչելի կենսունակութիւնը: Նա դեռ ևս կանգուն է, թէև արիւնաթաթախ: Նա արհամարհել է երկար դարերի ընթացքում բռնադաւաղների յարձակումները, մղելով միշտ, անյաղթելի կորովով իր գոյութեան կռիւը, որ միաժամանակ կռիւն էր յանուն քաղաքակրթութեան:

Հայկական խնդիրը պիտի յարատեւէ ուրեմն քանի որ նա առաջադիմութեան խնդիր է Արևելքում: Որոշ նշաններ վկայում են նոյնիսկ, որ նա գնալով աւելի պիտի ծանրանայ: Մասային խողխողումները քաղաքակիրթ կոչւած պետութիւնների անտարբեր աչքի առջև՝ դժնդակ մի դաս էին հայազգի համար: Այսօր աւելի քան երբևիցէ թիւրքահայը համոզւած է, որ ըմբոստացումի մէջ է իր փրկութիւնը: Այդ յաւիտենական ժխորի մէջ, ուր խեղդող քրդերի դժոխային ճիչերը միախառնուում են զոհերի հեծկտոցների հետ -- ամենաթող էակն իսկ դառնում է անհրաժեշտաբար յեղափոխական:

«Ճակատագրական է թուում -- ասում էր նոյն ինքը պ. Դելկասէ Փրանսիական պարլամենտի ամբիոնից 1902 յունւարի 20-ին, Ռուանէի հարցապնդումի ժամանակ -- որ եթէ ազգաբնակչութիւնները շարունակաբար և անպատիժ կերպով թալանեն ու ենթարկեն եղբունափորձերի՝ նրանք ի վերջոյ պիտի մտածեն, որ ամէն վիճակ լաւագոյն է, քան այն կեանքը, որ գտնուում է մասսային կոտորածի մղձաւանջի տակ»:

Արդեօք այդ խօսքերը դիւանագիտական նւիրագործումը չէ՞ն հայ յեղափոխական շարժման:

Գերագոյն ժամանակն է, պարոններ, հասկացնելու աշխարհին այդ վշտառիթ և անժխտելի ճշմարտութիւնը: Հայաստանը ներկայացնում է, յիրաւի, խմորումի մի ընդարձակ դաշտ, և տարօրինակ կը լինէր, եթէ ուրիշ կերպ չլինէր:

Չինւած ապստամբութեան գաղափարը քանի դնում

ուելի է տարածուած. նա անխուսափելի է և միանգամայն նպատակադրմամբ 'նա թւում է ամենաազդու միջոցը' մեր խնդրի լուծման համար:

Մենք կոչ ենք անում բոլոր սրտի մարդկանց՝ ուժ տալ — յանուն առաջադիմութեան ու մարդկայնութեան — հայ ժողովրդի գիմարութեանը:

Մարդասպան Համիդը գործի վրայ է: Արդէն չարաշուք պատրաստութիւններ են տեսնուում օրը ցերեկով Մուշուհ, Սասունում, Ջէյթուհում: Վերջին հինգ տարին շարունակ հետեւողականութեամբ առաջ տանելով հայ ազգի բնաջնջման գործը՝ տէնօրի ճանապարհով, մասնակի սպանութիւններով, մասսային կրօնափոխութիւններով, բունի գաղթականացումով — ելլողը հրէշը նորից ծրարում է մեծ կոտորածներ:

Չեղ է մնում, պարոններ, արգելել օսմանեան բարբարոսութեան յարձակողական դարձը: Չեղ է պատկանում՝ յիշեցնել շարունակաբար դիպլոմատներին՝ ներկայ և պաշտոն վտանգները և ձեր ազդու աշակցութիւնը բերել հայ ժողովրդին, որը իր գերագոյն յուսահատութեան մէջ որոշած է կուռել բոլոր ղէկերով՝ մինչև իր տարրական իրաւունքների յաղթանակը:

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏԵ  
"ԴՐՕՇԱԿ"-Ի ԽՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
(ԺՐՆԻՎ.)

ԿՆՏՏՐՕՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԵՂԿԵԱՆ ՀԱՅ ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
(ԼՕՆԿՕՆ)

Ժրմելի յուրս

Տ Ե Ռ Օ Ր

Զմիւռնիայում վերջերս տեղի ունեցած ղէկքերի առիթով՝ Հ. Յ. Գաշնակցութեան տեղական Կ. Կոմիտէն մահաւան էր գատապարտել մի քանի լրտեսներ:

Դրանցից ամենայայտնին՝ Մ ա բ ս ու տ Ա ս լ ա ն ե ա ն սպանւեց յուրիսի 2/11-ին, ցերեկով, քաղաքաբի հրապարակի վրայ: Տէնօրիստները ազատ են:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՅՑԵԱՆ ՔԻՒՐՕՆ ստացած է՝

"Վանքից" 500 ֆրանք, ԴԱՐԻՔԻ "Ազատ. ճանապարհ" գիրք 11-ի վաճառումից 28 ֆր. 30 ս., փերիշիմ Մարտ. ծառ 2 ֆր. 50 ս. (5 դրախտ), տիկ. Մ. -ից 1 ֆր., Գիւրիմիտի: Գ. Խ. -ի միջոցով 2 ֆր. 30 ս., ԳՐ. -ի "Առաջ" խմբից 151 ֆր. 45 ս., ժընէվից մի տիկնից 7 ֆրանք: Գումար 692 ֆրանք 55 սանթիմ:

ՐՈՒՄԱՆԻԱ՝

ՍՈՒՆԻՍԱՅԻ "Դանուբ" նիթակոմիտէն տիկնիներէ և օրհորդներէ հանգանակած ՚ի նպատակ "Հայկական կարմիր-խաչի":

Տիկ. տիկ. Նէմէլ 10 ֆրանք, Աշա. Շահ. 2, Պայծ. Յովհ. 3, Մարի. Շահ. 5, Մարր. Սարգս. 2, Վարդհ. Պոյնտ 2, օր. Ազա. Վարդ. 2, տիկ. Սրբուհ. Առագւ. 2, Մար. Կիրակոս 4, Թագու. Միքիթ. 3, Մար. Մատթէոս. 5, Վէգինոյ Տօնիկ. 1, Զարտ. Պապիկ. 5, Ոսկի Խրից. 5, Անիկա. Ուրտուր 5, Հոսիս. Եարութ. 5, Անդրա. Փարիզ. 2, Հոսիս. Գրիգոր 4: Գումար 67 ֆր.:

"Նոր դար" խ. (ապրիլ-մայիս-յունիս) 55 ֆրանք, "Սերոբ-Ներսիս" խ. 54, "Չիմաստ" խ. 30, "Ֆէդայի" խ. 31, 30, "Հազու" խ. 31, "Սնպու" խ. 36, 50, "Տարօն" խ. 32, "Կարին" խ. 34, "Վարդա" խ. 35, Ազատասէրի ամսավարներ 10, Գուր-ի ամսավարներ 4, Նէլինի Ս. Յ. 5, Նիքատոմէ վը 5: Գումար 362 ֆրանք 80 սանթիմ:

ԲՐԱՅՈՒՆՅՈՒՆ "Գուրգէն" խումբ. — Կիպրոս 5 ֆրանք, Պիծակ 5, Արծառնակ 1, Բարսեղ 5, Տարնոյ որդի 5, Կարիճ 1, Կայծակ 3, Բարիւղ 3, Աղբիւր 5, Մորակ 5, Շաւիղ 1, Կորուզ 5, Գաշնայն 4, Ուն 15, Բճուր 1, Յաւակ 3, Պայծառիկ 1, Բարսար 5: Գումար 73 ֆրանք: (Այս գումարից 3 ֆրանք մտու է խմբի գանձարանու):

ՆԱԽԱՅԱՆԳՍՑԻ Կեդր. Կոմիտէն՝

"Արշար" խմբ. 12 բուքլի, "Գազան տարօնցի" խմբ. 12, "Նախիվան" խմբ. 12, ապարանի "Ղարիբ" խումբը անարևելիքի ձևաւոր ժայռ գիւղից "Առիւծ" խմբ. 30, ժողագիւղից "Ազատ" խմբ. 13, Նոր գիւղից "Հերոս" և "Հերմու" խմբերից 5-ական, Հիւրընկալ գիւղից Մ. Կ. 10, Ս. Յ. 10, Կ. Գ. 5, Կ. Ա. 5, Գրիմի օղի 1, Յ. Բ. 5, Ա. Բ. 3, Գ. Բ. 3, Գ. Մ. 5, Կ. Գ. 3, Գ. Ա. 4: Գումար 148 սուքլի:

ԱՊԱՍՏՄԱՆ "Ղարիբ" խմբից, հաւաքուած "Ուսումնասէր" գիւղից. Մար. Վարդ. 4 բուքլի, Նահ. Յար. Վար. Մարտ. Օհ. Օհա. Նահ. Աւ. 5-ական, Աղ. Բու, Յակ. Կորի, Գաւ. Յազ, Մի. Նիլի, Վար. Յար. 3-ական, Յար. Գր., Առա. Գաւ, Մար. Զարար., Օ. Սորս., Յով. Զար., Միլիա. Օհա., Պ. Յովհ., Տր. Յազ., Պետ. Գար., Յով. Տաւ., Մար. Տաւ. 2-ական, Միլ. Վար. Անի, Կար. Առա., Գաւ. Գիւ, Մար. Փու, Անթա. Բեհն., Գաւ. Բեհն., Առա. Բեհն., Յակ. Տաւ., Օհ. Գոն., Կիր. Առա., Գր. Գոն., Օհ. Սորս., Մար. Յակ., Յակ. Թաղ., Գր. Առա., Անտ. Կար., Անտ. Յով., Պետ. Բու, Յով. Յաղ, Գաւ. Վարդ., Յով. Կար., Միլ. Յով., Աղ. Ավ, Միլ. Աւ., Յար. Տաւ., Կառա. Տաւ., Գաւ. Գաւ. մէկ-ական, Հա. Գաւ. 1. 15, Օհ. Բեհն. 1. 50, Տր. Բեհն., Բարիկէն աշակերտ, Մար. Զար., Տր. Յազ., Թորգոմ. աշ., Կար. Յով., Ան. Յովհ., Լուս. Յովհ., Ան. Յովհ., Թաղ. Փու, Մար. Փու, Մար. Առա., Յով. Առա., Մարց 50-ական կողմից, Մար. Պոռ. 20 կ., Կար. Բեհն. 40 կ.: Գումար 98 սուքլի 25 կոպ:

ԳԱՂԹԱՎԱՅՐԻ օրհորդաց "Բարիկէն-Սիւնի" խմբից հանգանակուած. — Պետրոս Մ. 10 սուքլի, Պաղտատար Զու. Մահակ մէկ, Յովսէփ Տր., Արամ Զու. 5-ական, Ներսէս Թոր. 4, Խաչիկ Մ. 4, Վարդուհի 2. 2. 50, Յովհաննէս Ա., Նշան Բաւ, Յովհաննէս Ն., Շրուանդ. 2. մէկ-ական, Գրիգոր Բ., Օ. 50, Յարութիւն Բ. Օ. 30, Յովհաննէս Մ. Օ. 20:

ՆՈՐ քաղաքի "Տիգրիս" խմբից. Առիւծ 1. 50 սուքլի, Արծիւ 1. 50, Աղանիկ, Տոռ Պախ, Երկաթ, Արտաւազ մէկ-ական, Բարեկորտ Օ. 50, Լազէ Օ. 50, Կէնոյ Օ. 50, "Արծից" խմբից. — Արմէն, Ազնաւոր, Սարազիլ մէկ-ական, Անդաղար Օ. 50, "Քաղնիք" խմբից. Բարսիլա, Գարբին, Տրվաչոյ 1. 50-ական, Աշոտ 6, Կարիտտ, արիւն, Տրվաչ, Բիդայի, Նահանջ, Սանդր, Արշաւան մէկ-ական, Բարեկորտ, Արտաւազ, Զրկանի, Զարեհ 9. 50-ական, Հարուզ Օ. 55, Բարէշ Օ. 30, "Գաւէն" խմբից. — Նուպար 5, մոնի 5, Մէլքիսեղէկ 3, Վասպուրականցի 2, "Շանթ" խմբից Արաւի 1: Գաղթավայրի Գետնաք գիւղից Թերթից 1: Գումար 94 սուքլի 85 կոպէլ:

ԱՐՈՊԱԿ. "Գրոշակ" N° 5-ի մէջ ՆԱԽԱՅԱՆԳՍՑԻ ցանկի մէջ փոխանակ "Արշար" խմբի պէտք է լինի "Կարէզ" խ. 4 ս., քանտարկեակի վը համար 5 ս.:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ Կոմիտէն՝

Մայիս 1-ից մինչև յունիս 1-ը 1902. "Մած" խ. անդամավճար 10 սուքլի, "Արմատ" խ. 10, փոճակախառնից 53, "Միւնիք" խ. 21, պատկերների վաճառումից 10. 50, "Նուպատ" խ. անդամավճ. 7, "Սերոբ-Ներսիս" խ. անդամավճ. 68, "Մարտ" խ. անդամավճ. 3, "Ղարիբ" խմբ. անդամավճ. 20, "Մի խմբից" 3000, "Շէրո-Շանթ" խ. անդամավճ. 25. 64: Գումար 3233 ս. 14 կ.:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՍՐՈՒԱՅԻՆ ՏՐԱՍԱՐԱՆՈՒԹԻՒՆ

(ԱՐՏԱՏՊԱՑ "ԴՐՕՇԱԿ"-ԻՑ)

Գինն է 50 սանթիմ, ճանապարհածախսով 60:

Խմբագրութեան գիմել հետեւեալ հասցեով՝  
Redaction du "Droschak", Genève (Suisse)